ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 759-Ա/Կ 23 հոկտեմբեր 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ>> ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ կետ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության <<Ներքին աուդիտի կանոնակարգը>>՝ համաձայն հավելվածի 1-ի:

2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հաստատման հաջորդ օրվանից:

Արմեն Աշոտյան

Հավելված 1
ՀՀ ԿԳ նախարարի
2014թ.հուլիսի _ _____-ի
N -Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ներքին աուդիտի կազմակերպական հիմքերը

ԳԼՈՒԽ 1 Ներքին աուդիտի կանոնակարգի նպատակը

1.Ներքին աուդիտի կանոնակարգի նպատակն է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենքներով նախատեսված նախարարության աշխատակազմի ստորաբաժանումներում, ենթակա հիմնարկներում, պետական ոչ առևտրային կազմակերպություններում և հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ կազմակերպություններում (այսուհետև՝ կազմակերպություն) ներքին աուդիտի գործընթացում ներգրավված աշխատակիցների համար ապահովել և նպատակ ունի օժանդակել նրանց՝ այդ կազմակերպություններում ներքին աուդիտի համակարգի ներդրման, աշխատանքների կազմակերպման, աուդիտի իրականացման և գնահատման աշխատանքներում:

2.Ներքին աուդիտի սույն կանոնակարգը սահմանում է կանոններ և ընթացակարգեր, որոնք պետք է պահպանվեն աուդիտի պլանավորման սկզբնական փուլից մինչև աուդիտի իրականացումը և աուդիտի եզրակացությունների ներկայացումը, ինչպես նաև այդ եզրակացությունների գծով վերստուգման աշխատանքների կատարումը: Օժանդակել նախարարին հասնելու՝ նախարարության առջև դրված խնդիրների իրականացմանը, բարելավելով նախարարությունում գործող համակարգերը և նախարարության կողմից իրականացվող գործառույթները:

ԳԼՈՒԽ 2 Ներքին աուդիտի ստանդարտները և կիրառման ցուցումները

3.Կանոնակարգը հիմնվում է հանրային հատվածում ներքին աուդիտի գործունեությունը կանոնակարգող օրենքների և այլ իրավական ակտերի վրա (<<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ

օրենք, ՀՀ ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներ, այսուհետ՝ ստանդարտներ, ՀՀ ներքին աուդիտորների վարքագծի կանոններ, այսուհետ՝ վարքագծի կանոններ, ՀՀ ներքին աուդիտի ստանդարտների կիրառման ցուցումներ, այսուհետ՝ կիրառման ցուցումներ) ներկայացնում է ներքին աուդիտի գործընթացի կազմակերպական և գործնական խնդիրները:

4.Ներքին աուդիտը հանդիսանում է անկախ և օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ, որն ուղղված է կազմակերպության գործունեության բարելավմանը և կազմակերպության համար հավելյալ արժեքի ստեղծմանը: Կազմակերպության կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման գործընթացների համակարգված և կարգավորված գնահատման ու դրանց բարելավման միջոցով ներքին աուդիտն աջակցում է կազմակերպությանը վերջինիս նպատակների արդյունավետ իրականացման գործում:

5.Ներքին աուդիտի գործունեության նպատակներից է կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացնել, որ կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգերի ներդնումը և պահպանումը):

6.Կրթության համակարգի կազմակերպություններում ներքին աուդիտի գործունեության նպատակներն են.

1) օժանդակել համակարգի կազմակերպություններին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,
2) տրամադրել վերահսկող մարմիններին կազմակերպության ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,

3) օժանդակել ոլորտի կազմակերպությունների ղեկավարներին հասնել իրենց առջև դրված նպատակներին՝ բարելավելով կազմակերպության համակարգերը և ծառայությունները,
4) իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,
5) ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

7.Ներքին աուդիտն ընդգրկում է կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները և կազմակերպության գործունեության արդյունքները, այսինքն՝ կազմակերպության ներքին հսկողության ողջ համակարգը՝ ներառյալ բոլոր գործառնությունները, ռեսուրսները, ծառայությունները:

8.Ներքին աուդիտի ընդգրկման շրջանակները սահմանվում են ներքին աուդիտի կանոնակարգով և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին տալիս է հնարավորություն կազմակերպության ղեկավարությանը ներկայացնել կազմակերպության ներքին հսկողության համակարգի համապատասխանության, հուսալիության և արդյունավետության մասին պատշաճ գնահատական:

9.Ի լրումն կազմակերպության ներսում իրականացվող աուդիտի, ներքին աուդիտի վարչությունը պետք է տրամադրի նաև համապատասխան եզրակացություն.

1) ենթակա միավորների (ենթակա հիմնարկներ և ոչ առևտրային կազմակերպություններ) նկատմամբ հսկողության վերաբերյալ,

2) ենթակա միավորների և ստորաբաժանումների ներքին աուդիտի կազմակերպման համապատասխանության վերաբերյալ,

3) կազմակերպության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների մակարդակով և ընդհանուր համակարգի հսկողության վերաբերյալ,

4) կապալառուների կամ ծառայություն մատուցողների հսկողության համակարգերի վերաբերյալ, եթե այդ հսկողությունն էական է կազմակերպության նպատակների իրագործման համար:

10.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն աուդիտի ենթակա միավորների վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը կազմելիս կարող է որոշում կայացնել՝ աուդիտի եզրակացությունն ինքնուրույն կազմելու մասին, կամ այն կազմելիս հիմնվել ենթակա միավորների վերաբերյալ արտաքին աուդիտորների կամ ստուգում իրականացնողների տրամադրած կարծիքների վրա:

11.Որոշ դեպքերում կազմակերպության ղեկավարը կարող է հանձնարարել ներքին աուդիտի ստորաբաժանմանը՝ ստորաբաժանումների ֆինանսական կառավարման ու քաղաքականության վերաբերյալ խորհրդատվական ծառայություն մատուցել: Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է հետևի, որ նման աշխատանքների իրականացման ժամանակ ներքին աուդիտի ստորաբաժանումը որևէ գործառնական պատասխանատվություն չկրի:

12.Ներքին աուդիտի ստորաբաժանումը պատասխանատու է նաև կազմակերպությունների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ներքին աուդիտի իրականացման համար: Այդ գործառույթների շրջանակներում, ներքին աուդիտի ստորաբաժանումը պարտավոր է.

1) ապահովել կազմակերպությունների միջև գործող բոլոր համակարգերի և կապերի նախանշումը,

2) գործուղել ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակցին կամ աշխատակիցներին նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, պետական հիմնարկների, ենթակա պետական ոչ առևտրային կազմակերպությունների, 50% և ավել պետական մասնակցությամբ պետական փակ բաժնետիրական ընկերությունների, հիմնադրամների և հասարակական կազմակերպությունների գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է կազմակերպությանը հասնել իր նպատակներին՝ կազմակերպության ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

3) ապահովել, որ սույն կետի 2-րդ ենթակետում նշված գործուղումները հաշվի առնվեն աուդիտի աշխատանքների ծրագրման ժամանակ, իսկ գործուղված աշխատակիցների գործունեությունը համապատասխանի ներքին աուդիտի կանոնակարգում սահմանված դրույթներին:

13.նախարարության համակարգում գործող մասնաճյուղերի, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, հիմնարկների, հիսուն տոկոսից ավելի պետական մասնակցությամբ կազմակերպությունների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ներքին աուդիտի ժամանակ սահմանված աշխատանքներն իրականացվում են պետական կառավարման մարմնի ներքին աուդիտի ստորաբաժանման ներքին աուդիտի կանոնակարգի դրույթներին համապատասխան և վերահսկվում է պետական կառավարման մարմնի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից: Ներքին աուդիտը չի հանդիսանում կազմակերպության կառավարչական գործընթացի մաս կամ ռիսկերի կառավարման համար պատասխանատու: Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքները ընդգրկում են նաև հետևյալ գործողությունները՝.

1) նշանակալի ռիսկի սահմանում և գնահատում,
2) ռիսկերի կառավարման համակարգի բարեփոխմանը նպաստում,
3) ռիսկերը չեզոքացնող հսկողության գործընթացների գնահատում,
4) հսկողության արդյունավետ ու օգտավետ գործընթացների և շարունակական բարեփոխումների խրախուսում,
5) ֆինանսական և գործառնական տեղեկատվության հավաստիությունն ու հուսալիությունն ապահովող ընթացակարգերի գնահատում և շեշտադրում,
6) հսկողության համակարգի բարեփոխումների առաջարկում, որոնք օժանդակում են կազմակերպության կառավարչական գործընթացների հետևյալ նպատակներին.

   ա. կազմակերպության ներսում վարքագծի կանոնների և ձևավորված արժեքների խթանում,

   բ. կազմակերպության ստորաբաժանումների գործունեության արդյունավետ կառավարման և հաշվետվողականության ապահովում,

գ. ռիսկերի և հսկողության գործընթացների վերաբերյալ կազմակերպության համապատասխան ստորաբաժանումներին տեղեկացման ապահովում:

ԳԼՈՒԽ 3 Ներքին աուդիտի կանոնակարգը

14.Ներքին աուդիտի գործունեության նպատակը, լիազորությունները և պարտականությունները սահմանվում է նախարարության ներքին աուդիտի վարչության կանոնակարգով: Ներքին աուդիտի կանոնակարգը՝ տվյալ կազմակերպության ներքին աուդիտի աշխատանքներն իրականացնելու հիմնական աշխատանքային փաստաթուղթն է:

1) Ներքին աուդիտի վարչության լիազորությունները՝

ա. Վարչությունը գործում է նախարարի ենթակայությամբ: Վարչության պետին և վարչության աշխատակիցներին նշանակում և ազատում, ինչպես նաև կարգապահական տույժի է ենթարկում՝ նախարարը:

բ. Նախարարության ստորաբաժանման, առանձնացված ստորաբաժանման և ենթակա կազմակերպությունների ղեկավարները պարտավոր են համագործակցել ներքին աուդիտի վարչության հետ, անհրաժեշտության դեպքում նրան տրամադրել տեղեկատվություն՝ տեղեկանքի, բացատրագրի կամ հայտարարության տեսքով: Վարչության աշխատակիցներին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր աուդիտ իրականացնելու համար: Ապահովել վերջիններիս անարգել մուտքը կազմակերպության տարածք:

գ. Վարչությունը և նրա աշխատակիցները իրավունք ունեն աջակցություն ստանալ կազմակերպության այն ղեկավարներից և աշխատակիցներից, որտեղ իրականացվում է աուդիտը: Վերջիններս պարտավոր են պատասխանելու վարչության պետի և աշխատակիցների հարցումներին՝ աուդիտի իրականացման շրջանակներում:

2) Ներքին աուդիտի ստորաբաժանման պարտականություններն են՝

ա. հետևել ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորների վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կանոնակարգին և լիազոր մարմնի կողմից հաստատված ներքին աուդիտի մեթոդաբանությանը.

բ. չհրապարակել և չտրամադրել իրենց գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

գ. գիտակցաբար չմասնակցել անօրինական գործողությունների և կատարել աշխատանքներ, որոնք վարկաբեկում են աուդիտորի մասնագիտությունը և տվյալ կազմակերպությունը.

դ.վարչության պետը պատասխանատու է վարչության և աշխատակիցների ընդհանուր գործունեության համար,

3) Վարչության պետը՝

ա.պետք է կազմի ներքին աուդիտի վարչության կանոնակարգի նախագիծը,ներքին աուդիտի տարեկան և ռազմավարական ծրագրերը և այն ներկայացնի նախարարի ու կոմիտեի քննարկմանն ու հաստատմանը,

բ. հանձնարարում վարչության աշխատակիցներին աուդիտորական առաջադրանքներ, ըստ նրանց հմտությունների և գիտելիքների,

*գ.*կազմում և նախարարի ու կոմիտեի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում տարեկան հաշվետվությունը.

*դ.*հետևում ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարմանը և աուդիտի մեթոդաբանության իրականացմանը:

15.Ներքին աուդիտի կանոնակարգը և դրանում փոփոխությունները մշակվում են ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացվում են ներքին աուդիտի կոմիտեի և կազմակերպության ղեկավարի քննարկմանը: Քննարկման արդյունքում լրամշակված տարբերակը համաձայնեցվում է ներքին աուդիտի կոմիտեի հետ և ներկայացվում կազմակերպության ղեկավարի հաստատմանը:

ԳԼՈՒԽ 4 Ներքին աուդիտի տեսակները

16.<<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի համաձայն ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է երկու կարևորագույն գործառույթ՝ հավաստիացման տրամադրում և խորհրդատվություն:

17.Ներքին աուդիտի համակարգային մոտեցումը նախատեսում է աուդիտորական առաջադրանքի իրականացման ընթացքում աուդիտորական ապացույցների ձեռքբերման տարբեր մեթոդների համալիր կիրառում:

18.Հավաստիացման ծառայությունների համար նշանակված աուդիտորական առաջադրանքն համակարգային մոտեցմամբ իրականացվում է աուդիտի հետևյալ տեսակների միջոցով.

1) համապատասխանության աուդիտ,

2) կատարողականի աուդիտ,

3) համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցություն:

18.1 Համապատասխանության աուդիտը կամ իրավական աուդիտը նախատեսված է օրենքներին, այլ իրավական ակտերին, ինչպես նաև կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) կազմակերպության գործունեության համապատասխանությունն ուսումնասիրելու համար: Այս դեպքում, շեշտը դրվում է ոչ միայն ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետության գնահատման, այլ նաև օրենքներին, այլ իրավական ակտերին և այլ պայմաններին կազմակերպության գործունեության համապատասխանության վերաբերյալ ղեկավարությանը հավաստիացման տրամադրման վրա:

18.2 Կատարողականի աուդիտը նախատեսված է գործընթացները գնահատել տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից: Կատարողականի աուդիտն ուսումնասիրում է ծառայության մատուցումը այս երեք հատկանիշների տեսանկյունից: Այն կարող է նաև ընդգրկել ծառայությունների համեմատումը համանման կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների հետ՝ որակի և ծախսերի տեսանկյունից:

18.3 Համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցության տարատեսակներից են՝ համակարգի գնահատման, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ աուդիտները:

ԳԼՈՒԽ 6 Համակարգի գնահատման աուդիտ

19.Համակարգի գնահատման աուդիտն ընդգրկում է ֆինանսական կառավարման համակարգերի և ղեկավարության կողմից ներդրված ներքին հսկողության համակարգերի մանրակրկիտ գնահատում՝ դրանց արդյունավետությունը և օգտավետությունը ուսումնասիրելու և դիտարկելու նպատակով:

20.Համակարգի գնահատման աուդիտը հանդիսանում է ներքին աուդիտի տեսակներից ամենաարդյունավետը, քանի որ, եթե հսկողության գործընթացները գործում են այնպես, ինչպես նախատեսված է, ապա և՛ ներքին աուդիտորները, և՛ կազմակերպության ղեկավարն ու ներքին աուդիտի կոմիտեն կարող են հավաստիացած լինեն հսկողության համակարգի պատշաճության մեջ:

ԳԼՈՒԽ 7 Ֆինանսական աուդիտ

21.Ֆինանսական աուդիտի նպատակն է գնահատել ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, ինչպես նաև վերջիններիս համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների կիրառելի հիմունքներին, հարկային և այլ օրենսդրության պահանջներին: Ֆինանսական աուդիտի ընթացքում օգտագործվում են վերլուծական ընթացակարգեր և մանրամասների ստուգման ընթացակարգեր:

ԳԼՈՒԽ 8 Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ

22.Տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի ընթացքում կազմակերպությունում իրականացվում է գործող տեղեկատվական տեխնոլոգիաների հսկողության գործընթացների կազմակերպության պահանջներին համապատասխանությունը, դրանց կիրառելիությունը և արդյունավետությունը: Այս աուդիտը կարող է ներառել ինչպես կազմակերպությունում առկա բոլոր տեղեկատվական տեխնոլոգիաների կամ առանձին ոլորտի տեղեկատվական տեխնոլոգիաների հսկողության գործընթացները, այնպես էլ դրանց նախագծերը կամ առանձին փուլերը: Հաճախ տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտն իրականացվում է այն

ժամանակ, երբ կազմակերպության որևէ բնագավառում ներդրվում է համակարգչային նոր համակարգ:

ԳԼՈՒԽ 9 Խորհրդատվական ծառայություններ

23.Խորհրդատվական ծառայությունները ներքին աուդիտորների կողմից մատուցվող այն ծառայություններն են, որոնց ընթացքում նրանք գնահատում են կազմակերպության կառավարչական և ներքին հսկողական գործընթացները կամ դրանց մի մասը՝ արդյունքում տալով դրանց թույլ կողմերի բարելավման անհրաժեշտ ուղղությունները և հնարավոր լուծումները:

24.Խորհրդատվական ծառայությունների մատուցման համար նշանակված առաջադրանքը բաղկացած է կազմակերպության որոշակի ոլորտի ներքին հսկողության գործընթացների, ռիսկերի կառավարման բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման, կարծիքի ներկայացման, ուսուցման և այլ ծառայություններից: Ի տարբերություն համակարգի գնահատման աուդիտի՝ այս դեպքում ուսումնասիրվում է ոչ թե ներքին հսկողական տարրերի գործունեության արդյունավետությունը, այլ տվյալ ոլորտի հետագա հնարավոր նախագծումը:

25.Խորհրդատվական ծառայություններ մատուցելիս ներքին աուդիտի կողմից տրամադրված առաջարկությունների և խորհուրդների իրագործման վերջնական որոշման կայացումը և պատասխանատվությունն ընկած է կազմակերպության ղեկավարի վրա: Ներքին աուդիտորները պետք է ցուցաբերեն զգուշավորություն ղեկավարության պարտականություններ չստանձնելու համար, ինչի հետևանքով կարող է խախտվել ներքին աուդիտորի անկախությունը և օբյեկտիվությունը: Նման ծառայությունները կարող են ներառել.

1) խորհրդատվության մատուցում ղեկավարության որևէ մի գործառույթի իրականացման ընթացքում,

2) օժանդակություն նման գործընթացների իրականացման ընթացքում,

3) տարբեր բնույթի ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպում և այլն:

ԳԼՈՒԽ 10 Խարդախության դեմ պայքարի և հակակոռուպցիոն միջոցառումներ

26.Ներքին աուդիտի ստորաբաժանումը պատասխանատվություն չի կրում խարդախության դեմ պայքարի և հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի (կանխարգելում, բացահայտում, քննություն և այլն) համար, սակայն կարող է դեր ունենալ դրանց իրագործման ընթացքում: Կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների պահպանման հուսալիության վերաբերյալ ներքին աուդիտի ստորաբաժանման բացահայտումները, ինչպես նաև խարդախության դեմ պայքարի և հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի իրականացման վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների մատուցումն օգտավետ է կազմակերպության համար: Ներքին աուդիտորները պետք է տիրապետեն անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և այլ ունակությունների խարդախության հատկանիշների հայտնաբերման համար, որոնք կարող են էականորեն աջակցել կազմակերպության գործառույթների իրականացման հարցում:

27.Վճռորոշ դեր կարող են ունենալ նաև աուդիտի ընթացքում խարդախության բացահայտումների վերաբերյալ ժամանակին և ճշգրիտ հաղորդումները:

ԳԼՈՒԽ 11 Կազմակերպությունում առկա տեղեկատվության հասանելիությունը ներքին աուդիտորներին

28.Ներքին աուդիտորներն իրավունք ունեն օգտվելու աուդիտի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպության ողջ էլեկտրոնային տեղեկատվությունից և գրանցումներից, այդ թվում գաղտնի տեղեկատվությունից՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի: Սակայն զգայուն կամ գաղտնի տեղեկատվությունից օգտվելու իրավունքը չի նախատեսում այդ տեղեկատվության պատճենահանումը կամ այլ կերպ կրկնօրինակումը ներքին աուդիտորների կողմից: Ներքին աուդիտորներն իրավունք չունեն հրապարակել կամ այլ անձանց տրամադրել աուդիտի ընթացքում ձեռք բերված կամ հայտնի դարձած տեղեկատվությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

29.Ներքին աուդիտորներն առաջադրանքների իրականացման ընթացքում իրավունք ունեն հաղորդակցվել աուդիտի ենթարկվող միավորների ղեկավարների և աշխատակիցների հետ՝ ստանալով վերջիններիս աջակցությունը: Այս իրավունքների սահմանափակումը կարող է

հանգեցնել ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների շրջանակների սահմանափակմանը, որի մասին պետք է հայտնել աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին: Չհիմնավորված սահմանափակումները չվերացնելու դեպքում այդ մասին պետք է անմիջապես տեղեկացնել կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին:

ԳԼՈՒԽ 12 Վարքագծի կանոններ

30.Ներքին աուդիտորներն իրենց աշխատանքային պարտականությունների իրականացման ընթացքում պարտավոր են պահպանել վարքագծի կանոնները, ցուցաբերել անաղարտ, օբյեկտիվ և կարողունակ պատշաճ մասնագիտական վերաբերմունք և պահպանել գաղտնիությունը:

ԳԼՈՒԽ 13 Անկախություն

31.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն իր պարտականությունների պատշաճ կատարման նպատակով պետք է հաշվետու լինի կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին: Կազմակերպության ղեկավարը միջոցներ է ձեռնարկում ներքին աուդիտորների անկախությունը խթանելու և աուդիտի լիազորությունների շրջանակի, ինչպես նաև առաջադրանքի առաջարկությունների գծով համապատասխան գործողությունների ապահովման համար:

32.Ներքին աուդիտի կոմիտեի հիմնական գործառույթներից մեկն է հսկողություն իրականացնել կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության նկատմամբ, ինչպես նաև կոորդինացնել ներքին աուդիտի ստորաբաժանման և այլ ստորաբաժանումների փոխհարաբերություններն արտաքին աուդիտորների հետ:

33.Անկախությունը ենթադրում է, որ ներքին աուդիտի ստորաբաժանումն անկախ է աուդիտի ենթարկվող միավորից առաջադրանքի աշխատանքները պլանավորելիս, իրականացնելիս և ստացված արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելիս: Ներքին աուդիտի կոմիտեն պետք է ապահովի ներքին աուդիտի անկախությունը: Կարևոր է ուղղակի կապի ապահովումը վերջինիս հետ, որը ենթադրում է հանդիպումներ, քննարկումներ, երկխոսություններ փոխադարձ կարևորություն ներկայացնող հարցերի շուրջ: Մասնակցությունը հանդիպումներին և քննարկումներին հնարավորություն է տալիս գնահատել կազմակերպության

ռազմավարական նպատակների իրականացումը և գործառնական զարգացումները, ինչպես նաև վաղ փուլում բարձրացնել ռիսկերի, համակարգերի, ընթացակարգերի և հսկողության հետ կապված հարցերը: Այն թույլ է տալիս միմյանց միջև փոխանակել ներքին աուդիտի ստորաբաժանման ծրագրերի ու գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը:

34.Անկախությունը մոտեցում է, որը բնութագրվում է աուդիտի գործընթացների նկատմամբ անաղարտ և օբյեկտիվ վերաբերմունքով: Հետևաբար, անկախությունը կարելի է դիտարկել որպես վարքագծի կանոնների երկու հիմնական սկզբունքների՝ օբյեկտիվության և անաղարտության ամբողջություն: Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն ամբողջական պատասխանատվություն է կրում ներքին աուդիտորի անկախության պահպանման համար անհրաժեշտ գործողությունները որոշելու հարցում: Որոշ դեպքերում այդ գործողությունները կարող են ներառել այնպիսի որոշումների կայացում, որոնք խրախուսելի չեն աշխատակիցների կողմից կամ կարող են առաջացնել գործառնական դժվարություններ: Սակայն այդ որոշումներն անհրաժեշտ են ներքին աուդիտի ստորաբաժանման անկախությունը պահպանելու համար: Ստորև ներկայացված են անկախությանը սպառնացող վտանգների օրինակներ և համապատասխան ռիսկերը մեղմացնող գործողություններ.

35.Անկախությունը չխախտելու նպատակով ներքին աուդիտորները չպետք է ներառվեն կառավարչական այնպիսի գործընթացներում (օրինակ՝ հաշվապահական հաշվառման ընթացակարգերի ներդրում կամ գրանցումների իրականացում), որոնք հետագայում ենթադրում են վերջիններիս կողմից գնահատումներ:

36.Եթե աուդիտի աշխատանքներում ժամանակավոր ներգրավվում են փորձագետներ, ապա նրանց չպետք է հանձնարարվի այն աշխատանքների աուդիտի իրականացումը, որոնք կատարվել են նրանց կողմից աուդիտի ժամանակաշրջանին նախորդող առնվազն մեկ տարի առաջ: Համարվում է, որ նման աշխատանքները բացասաբար են անդրադառնում օբյեկտիվության վրա, և այս հանգամանքին պետք է հատուկ ուշադրություն դարձվի աուդիտի աշխատանքների վերահսկման և արդյունքների ներկայացման ժամանակ:

ԳԼՈՒԽ 14 Կարողունակություն

37. Ներքին աուդիտի աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է ապահովի, որ ներքին աուդիտի գործընթացում ներգրավված անձիք, իրենց առջև դրված խնդիրների իրականացման համար, տիրապետեն որոշակի գիտելիքների և հմտությունների: Ստորև ներկայացվում են ներքին աուդիտորների կարողունակությանը ներկայացվող մի քանի ընդհանուր պահանջներ.

1) ներքին աուդիտի աշխատանքներն իրականացնելիս ներքին աուդիտորներից պահանջվում է ցուցաբերել ստանդարտների, ընթացակարգերի և մեթոդների կիրառման կարողունակություն: Կարողունակությունը նշանակում է հնարավոր իրավիճակներում գիտելիքները կիրառելու և այդ իրավիճակներում առանց ծավալուն տեխնիկական հետազոտության և աջակցության գործելու կարողություն,

2) այն աուդիտորները, ովքեր հիմնականում գործ ունեն ֆինանսական գրանցումների և հաշվետվությունների հետ, պահանջվում է ցուցաբերել ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հիմունքների և հաշվապահական քաղաքականության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների համապատասխան ստանդարտների իմացություն,

3) ներքին աուդիտորներից պահանջվում է կառավարման սկզբունքների ընկալում՝ կազմակերպության պատշաճ գործելակերպից շեղումների էականությունը և նշանակալիությունը որոշելու և գնահատելու համար: Ըմբռնում նշանակում է հնարավոր իրավիճակներում լայն գիտելիքները կիրառելու, նշանակալի շեղումները բացահայտելու, ինչպես նաև հիմնավորված որոշումների կայացման համար անհրաժեշտ ուսումնասիրություն կատարելու ունակություն,

4) ներքին աուդիտորներից պահանջվում է այնպիսի բնագավառների հիմնարար սկզբունքների իմացություն, ինչպիսիք են հաշվապահական հաշվառումը, տնտեսագիտությունը, առևտրային իրավունքը, հարկերը, ֆինանսները, վերլուծական, քանակական մեթոդները և տեղեկատվական տեխնոլոգիաները: Ներքին աուդիտորները պետք է կարողանան

հասկանալ խնդրի առկայությունը և որոշել, թե հետագա ինչ ուսումնասիրություն կամ աջակցություն է անհրաժեշտ:

38.Ներքին աուդիտորները պետք է կարողանան հաղորդակցվել աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի և այդ ստորաբաժանման աշխատակիցների հետ և աշխատանքային հարաբերությունների ընթացքում բավարար կապեր պահպանել այդ անձանց հետ: Ներքին աուդիտորները պետք է տիրապետեն գրավոր և բանավոր խոսքի հմտություններին, որպեսզի կարողանան հստակորեն ներկայացնել այնպիսի հարցեր, ինչպիսիք են առաջադրանքի նպատակները, շրջանակները, գնահատումները, եզրակացությունները և առաջարկությունները:

39.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է ստեղծել անհրաժեշտ բոլոր պայմանները կազմակերպության ներքին աուդիտորների պատշաճ մասնագիտական վերաբերմունքն ապահովելու համար: Այդ նպատակով պետք է ապահովվի ստանդարտներով նախատեսվող աուդիտի որակի երաշխավորմանը համապատասխան ներքին աուդիտի համակարգի առկայություն:

40.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է նպաստավոր պայմաններ ստեղծել ինչպես ներքին աուդիտորների, այնպես էլ նրանց շարունակական մասնագիտական վերապատրաստումն ապահովելու համար: Ներքին աուդիտորները պետք է ստանան շարունակական մասնագիտական կրթություն, որը կվերաբերի կազմակերպության գործունեությանն ու բնագավառին և ուղղված կլինի կառավարչական գործընթացների, ռիսկերի և հսկողության գործընթացների գծով կարողունակության պահպանմանը:

Գլուխ 15. Ներքին աուդիտի ստորաբաժանման առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարները և աշխատակիցները

41.Ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացվող աուդիտորական առաջադրանքի աշխատանքների պատասխանատուները հանդիսանում են ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարները, որոնք պատասխանատու են առանձին աուդիտորական առաջադրանքների ուղղորդման և վերահսկման համար: Ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարների պարտականություններն են.

1) ուղղորդել ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի անդամների աշխատանքները՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով աջակցություն,

2) հաղորդել ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին հայտնաբերված խնդիրները և մտահոգությունները,

3) ապահովել աուդիտորական առաջադրանքների աշխատանքային ծրագրերին համապատասխան աուդիտի պատշաճ կատարումը,

4) քննարկել ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և ներքին աուդիտորների հետ աուդիտորական առաջադրանքների իրականացման ավելի արդյունավետ և օգտավետ մոտեցումներ,

5) մասնակցել աուդիտորական առաջադրանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների կազմման աշխատանքներին:

42.Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները կատարում են աուդիտորական առաջադրանքների ծրագրով սահմանված աշխատանքներ: Ներքին աուդիտորները աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարի հետ մշտապես պետք է քննարկեն իրականացված աշխատանքների և դրանց կատարման ընթացքում առաջացած խոչընդոտների, սահմանափակումների ու առաջադրանքի աշխատանքային ծրագրից շեղումների հետ կապված հարցերը:

ԳԼՈՒԽ 16. Փորձագետների կամ խորհրդատուների մասնակցությունը ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքներին

43.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ռեսուրսների գնահատման արդյունքում կարող է դիմել կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին այլ ոլորտների փորձագետների ներգրավման համար, ինչը թույլ կտա ամբողջապես իրականացնել աշխատանքի այն ուղղությունները, որտեղ աուդիտորների կարողունակությունը բավարար չէ:

44.Փորձագետները կամ խորհրդատուները կարող են լինել ապահովագրական ընկերությունների վիճակագիրները (ակտուարներ), հարկային և ֆինանսական ոլորտի մասնագետները,

գնահատողները, բնապահպանները, խարդախության դեպքերի բացահայտման փորձագետները, իրավաբանները, ճարտարագետները, երկրաբանները, անվտանգության մասնագետները, տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետները և այլն: Աուդիտի աշխատանքներում նման փորձագետները կարող են ներգրավվել կազմակերպության ղեկավարի որոշմամբ:

45.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է հավաստիանա, որ փորձագետը տիրապետում է տվյալ աշխատանքի կատարման համար պահանջվող գիտելիքներին, հմտություններին, ինչպես նաև փորձագետի անկախության մեջ: Փորձագետի կարողունակությունը որոշելիս ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է հաշվի առնի հետևյալը.

1) տվյալ բնագավառում փորձագետի մասնագիտացման մասին վկայող որակավորման հավաստագիրը, լիցենզիան և այլն,

2) համապատասխան մասնագիտական մարմնին անդամակցումը և տվյալ մարմնի վարքագծի կանոնների հետ համապատասխանության պահպանումը,

3) հեղինակությունը, որը, անհրաժեշտության դեպքում, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կարող է գնահատել՝ տվյալ փորձագետի աշխատանքին ծանոթ այլ անձանց հարցում կատարելու միջոցով,

4) նախկինում համանման աշխատանքների կատարման, ինչպես նաև այն ոլորտում փորձը, որտեղ գործունեություն է ծավալում կազմակերպությունը,

5) տվյալ աշխատանքի համար պահանջվող կրթությունը և վերապատրաստումը:

46.Աշխատանքի կատարման ողջ ընթացքում փորձագետի անկախությունը և օբյեկտիվությունն ապահովելու համար ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է նախապես գնահատի տվյալ փորձագետի կապը կազմակերպության և ներքին աուդիտի ստորաբաժանման հետ: Գնահատումը կատարելիս ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է պարզի ֆինանսական, կազմակերպական կամ անձնական այն կապերի առկայությունը, որոնք կարող են

խոչընդոտել ծառայություն մատուցողի կողմից օբյեկտիվ եզրակացություններ և կարծիքներ տալուն:

47.Փորձագետների և/կամ խորհրդատուների հետ անհրաժեշտ է կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր: Պայմանագրում պետք է ներառել այնպիսի հարցեր, ինչպիսիք են աշխատանքների շրջանակները, նպատակները, տրամադրվող հաշվետվությունների կազմը, ժամկետները, փորձագետների իրավունքները (օրինակ՝ կազմակերպության գրանցումներից օգտվելու գծով գաղտնիության պահպանման պարտավորությունը և պատասխանատվությունը այն հրապարակման կամ այլ անձանց փոխանցման համար) և այլն:

ԳԼՈՒԽ 17 Ներքին աուդիտի գնահատման օբյեկտները և աուդիտի ենթակա միջավայրը

48.Աուդիտի ենթակա միջավայրն ընդգրկում է կազմակերպության աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները:

49.Ներքին աուդիտի ենթակա միջավայրը (այսուհետ՝ աուդիտի միջավայր) ներառում է կազմակերպության ամբողջ համակարգը: համակարգի կազմակերպությունները՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունները (ՊՈԱԿ).), փակ բաժնետիրական ընկերությունները (ՓԲԸ),

1) հիմնարկները (այդ թվում՝ ծրագրերի իրականացման գրասենյակներ),

2) կառուցվածքային ստորաբաժանումները (վարչությունները, բաժինները),

3) առանձնացված ստորաբաժանումները (գործակալություններ, տեսչություններ, ծառայություններ),

4) այլ ստորաբաժանումները, գործընթացները, ծրագրերը:

50.Եթե պետական կառավարման մարմինների համակարգում գործող պետական ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես նաև հիսուն տոկոս և ավելի պետական կազմակերպություններում մշտապես գործուղվում է ներքին աուդիտոր պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից, ապա գործուղված ներքին աուդիտորն իրականացնում է ներքին աուդիտի գործունեություն պետական կառավարման մարմնի ղեկավարի ենթակայությամբ: Գործուղված ներքին աուդիտորն իրականացնում է աուդիտորական առաջադրանքներ

պետական կառավարման մարմնի ներքին աուդիտի ստորաբաժանման ներքին աուդիտի կանոնակարգով սահմանված պահանջների համաձայն՝ վերահսկվելով պետական կառավարման մարմնի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից ու ստանալով անհրաժեշտ ուղղորդում ռիսկերի վերլուծության ու պլանավորման, հսկողության գործընթացների գնահատման, աուդիտի հաշվետվությունների պատրաստման և ներկայացման, ինչպես նաև վերստուգման գործընթացների իրականացման ընթացքում:

51.Երբ կազմակերպությունում ներքին աուդիտն իրականացվում է մասնավոր կազմակերպության կողմից, ապա մասնավոր կազմակերպությունը պետք է ապահովի իր առնվազն մեկ աշխատակցի մշտապես ներկայությունը կազմակերպությունում: Ընդ որում, այս դեպքում մասնավոր կազմակերպության կողմից նշանակված անձը պատասխանատու է սույն ուղեցույցով նախատեսված բոլոր պահանջների կատարման համար: Մասնավոր կազմակերպության ընտրության և մատուցված ներքին աուդիտի ծառայության որակի համար վերջնական պատասխանատվություն կրում է կազմակերպության ղեկավարը:

52.Եթե պետական կառավարման մարմինների համակարգում գործող պետական ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես նաև հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ կազմակերպություններում չի գործուղվում ներքին աուդիտոր, ապա պետական կառավարման մարմնի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը նշված հիմնարկներում և կազմակերպություններում իր ռազմավարական և տարեկան ծրագրով սահմանված կարգով իրականացնում է պարբերական աուդիտորական առաջադրանքներ:

53.Աուդիտի միջավայրը պարունակում է տարաբնույթ տարրեր, որոնք միասին կազմում են մի մեծ ցանկ: Ելնելով արդի խնդիրների զարգացումներից և ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսների սահմանափակությունից՝ ներքին աուդիտի ստորաբաժանումները կենտրոնանում են կազմակերպության կառավարչական գործընթացների, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգի գործընթացների գնահատման արդյունքում ընտրված տարրերի, այլ ոչ թե կազմակերպության աուդիտի միջավայրի ողջ տարրերի վրա: Այս գործընթացներն ուղղակիորեն կապված են կազմակերպության ռիսկային միջավայրի հետ, որը կարող է չհամընկնել կազմակերպության աուդիտի միջավայրի հետ:

54.Ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթներից են կազմակերպության կառավարչական գործընթացների գնահատումը և բարելավումը: Ներքին աուդիտի ստորաբաժանման դերը կայանում է նրանում, որ գնահատի կազմակերպության կառավարչական գործընթացների նախագիծը և գործունեության արդյունավետությունը: Կառավարչական գործընթացների դեռևս չձևավորված լինելու դեպքում ներքին աուդիտորը կարող է նաև ունենալ խորհրդատուի դեր նման գործընթացների նախագծման, ներդրման և գործունեության ընթացքում: Անշուշտ այս դեպքում պետք է ցուցաբերել առավելագույն ուշադրություն՝ ինքնաստուգման ռիսկերի (վտանգի) հետևանքով ներքին աուդիտորի անկախությունը չխախտելու համար: Ներքին աուդիտորը պետք է նաև խրախուսի նման գործընթացների պաշտոնապես ընդունումը և գործարկումը կազմակերպության ներսում:

55.Ներքին աուդիտի ստորաբաժանման մյուս գործառույթն է կազմակերպությունում իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացի գնահատումը: Եթե կազմակերպությունում գործում է ռիսկերի կառավարման առանձնացված ստորաբաժանում, ապա ներքին աուդիտի ստորաբաժանումը գնահատում է այդ գործընթացների արդյունավետությունը: Այն դեպքերում, երբ կազմակերպությունում առկա չէ ռիսկերի կառավարման ստորաբաժանում, ներքին աուդիտի ստորաբաժանումն աջակցում է կազմակերպության ղեկավարին ռիսկերի հայտնաբերման, գնահատման և ռիսկերի կառարվարման գործընթանցների կազմակերպման գործում, ինչպես նաև այդ գծով ներքին աուդիտի կանոնակարգով սահմանված հաճախականությամբ (պարբերաբար) խորհրդատվական ծառայություններ է մատուցում:

56.Ներքին աուդիտի ստորաբաժանման մյուս գործառույթն է ներքին հսկողության համակարգի արդյունավետության և օգտավետության գնահատումը: Հսկողության համակարգի մաս կազմող հսկողության գործընթացները կամ նրանց տարրերը սահմանվում են ղեկավարության կողմից ձեռնարկված ցանկացած գործողություն ռիսկը կառավարելու և նպատակների իրագործման հավանականությունը բարձրացնելու նպատակով: Ներքին հսկողության համակարգի գործընթացները գնահատելիս թերացումների և բացթողումների հայտնաբերման դեպքում ներքին աուդիտի ստորաբաժանումը կարող է խորհուրդներ ներկայացնել այդ թերացումների և բացթողումների վերացման նպատակով՝ ստեղծելով հավելյալ արժեք կազմակերպության համար:

ԳԼՈՒԽ 18 Կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրում

57.Կազմակերպության ռազմավարական ծրագրի մշակման առաջին փուլն է հանդիսանում տվյալ կազմակերպության գործունեության ուսումնասիրումը: Այս փուլում իրականացվում է ոչ միայն կազմակերպության ներքին միջավայրի, այլ նաև նրա վրա ազդող արտաքին միջավայրի գործոնների ուսումնասիրություն:

58.Ուսումնասիրության իրականացման նպատակով ներքին աուդիտորները պետք է օգտվեն կազմակերպության ռազմավարական ծրագրերից, կազմակերպության գործունեությունը կանոնակարգող օրենսդրությունից և կազմակերպության տարեկան և հեռանկարային բյուջեների կազմելու հիմք հանդիսացող հաշվարկներից:

59.Նշված փաստաթղթերից ներքին աուդիտի ստորաբաժանումն առանձնացնում է այն միջոցառումները, որոնք առաջիկայում նախանշվել են որպես կազմակերպության հիմնական խնդիրներ և նպատակներ: Նշված միջոցառումները նախանշելուց հետո ներքին աուդիտի ստորաբաժանումը պետք է կազմի կազմակերպության նպատակների իրագործման համար անհրաժեշտ աշխատանքների ու դրանց կատարման համար պատասխանատուների ցանկը՝ սահմանելով աուդիտի միջավայրը:

60.Այս երկու մեթոդներով կատարված կազմակերպության ընդհանուր գործունեության վերլուծության օրինակները նկարագրված են սույն ուղեցույցի 2-րդ հավելվածում: Հարկ է նշել, որ վերոնշյալ մեթոդների կիրառումը չի կրում պարտադիր բնույթ, և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կարող է օգտագործել կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրման այլ մեթոդաբանություններ: Սակայն, շատ կարևոր է հենց այս փուլից տիրապետել կազմակերպության հիմնական գործընթացներին, ինչպիսիք են ռիսկերի կառավարումը, պետական հիմնարկների նախահաշիվների կազմումը և, հետագայում, փաստացի տվյալների հետ համեմատման գործընթացները և այլն:

ԳԼՈՒԽ 19 Ռիսկերի գնահատում

61.Նախորդ փուլում նախանշված աուդիտի միջավայրի բաղկացուցիչ միավորներն ունեն իրարից խիստ տարբերվող բնութագրեր և, սահմանափակ ռեսուրս ունենալու պատճառով,

նպատակահարմար է ներքին աուդիտի ստորաբաժանման ուժերը կենտրոնացնել ավելի առանցքային նշանակություն ունեցող միավորների վրա:

62.Այս փուլում իրականացվում է նախանշված միավորների համար ռիսկի ցուցանիշների որոշում, որոնց հիման վրա կորոշվի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների իրականացման հաճախականությունը, ծավալները և խորությունը տվյալ միավորում: Շատ կարևոր է գլխավոր միավորների ներառումը աուդիտի առավել հաճախակի կատարվող աշխատանքների շրջանակներում: Միավորների ռիսկերի վերլուծությունն աուդիտի իրականացման անհրաժեշտության գնահատման հիմնական փուլն է: Վերջինս մեծապես օգնում է աուդիտորներին որոշել աուդիտների առաջնահերթությունը և հաճախականությունը: Բացի այդ, նրանց միջոցով հնարավոր է որոշել բարձր ռիսկեր պարունակող այն միավորները, որոնք այլ կերպ հնարավոր չէ բացահայտել:

63.Այն միավորներում, որտեղ պետական կառավարման մարմինների համակարգում գործող պետական ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես նաև հիսուն տոկոսից ավելի պետական մասնակցությամբ կազմակերպություններում գործուղվում է ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակից, ապա այդ միավորների համար ռիսկերի գնահատում պետական կառավարման մարմնի մակարդակով չի կատարվում: Այդ միավորների գծով պետական կառավարման մարմնի կամ համայնքի ռազմավարական ծրագրում նախատեսվում է անհրաժեշտ ռեսուրսների քանակ՝ մշտապես առնվազն մեկ ներքին աուդիտոր տվյալ աուդիտի ենթարկվող միավոր գործուղելու նպատակով: Իսկ գործուղված ներքին աուդիտորն իրականացնում է ռիսկերի գնահատում միայն այդ միավորի շրջանակներում՝ որոշելու տվյալ միավորում աուդիտների առաջնահերթությունը և հաճախականությունը:

ԳԼՈՒԽ 20 Ընդհանուր ռեսուրսների հաշվարկում

64.Ներքին աուդիտի աշխատանքների համար նախատեսված ժամանակը սահմանափակվում է ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսներով: Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է որոշի այն աշխատանքային օրերի քանակը, որն անհրաժեշտ է հաջորդ երեք տարիների ընթացքում՝ տարեկան կտրվածքով, արդեն ընտրված միավորներն աուդիտի ենթարկելու համար: Աուդիտի գործունեության համար ակնկալվող ստանդարտ

ժամանակահատվածը որոշելու համար հաշվի է առնվում յուրաքանչյուր միավորի ռիսկայնության մակարդակը: Բացի ռիսկայնության գործոնից անհրաժեշտ է հաշվի առնել միավորի բարդությունը: Պարզ միավորներն ավելի քիչ ժամանակ են պահանջում քան բարդ միավորները: Օրինակ՝ ավելի շատ ժամանակ կպահանջվի աշխատավարձի հաշվարկների համակարգն աուդիտի ենթարկելու համար, քան՝ վարձակալությունից ստացվող եկամուտը: Ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսները հաշվարկվում են յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով վերապատրաստումների ժամանակահատվածը, աշխատակիցների ամենամյա արձակուրդները, հիվանդության պատճառով բացակայությունները և այլն:

65.Ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական ծրագիրը նաև օգնում է պլանավորել հատուկ մասնագիտական ռեսուրսների տրամադրումը: Գործունեության ընթացքում կարող է անհրաժեշտ լինել ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ այն ոլորտների աշխատանքներում, որտեղ պահանջվում են, օրինակ, տեղեկատվական տեխնոլոգիաների խոշոր նախագծի կազմում և համապատասխան փորձառությամբ մասնագետներ:

66.Հիմնվելով ընդհանուր ռեսուրսների հաշվարկների վրա՝ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է որոշի պլանավորված աշխատանքն իրականացնելու համար աուդիտորների անհրաժեշտ քանակը:

67.Պլանավորված ընդհանուր թիվը բաժանելով ներքին աուդիտորի հասանելի օրերի թվի վրա՝ կստացվի այն մասնագետների մոտավոր քանակը, որն անհրաժեշտ է ներքին աուդիտի ստորաբաժանմանը տվյալ աշխատանքն իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ 21 Տարեկան և ռազմավարական ծրագրերի կոորդինացումը հսկողություն իրականացնող այլ կառույցների հետ

68.Տարեկան և ռազմավարական ծրագրերը կազմելու ընթացքում պետք է հաշվի առնվի կազմակերպությունում այլ մարմինների կողմից իրականացվող կամ իրականացվելիք ստուգումները, որպեսզի հնարավոր լինի խուսափել նույն գործառույթների կրկնություններից, ինչպես նաև գնահատման, ճշգրտման և պլանավորման փուլերում անհրաժեշտ է հաշվի առնել այլ մարմինների կատարված ստուգումների արդյունքները:

69.Պլանավորման ընթացքում նաև պետք է հաշվի առնել Լիազոր մարմնի դիտարկումների (մոնիթորինգի) և արտաքին գնահատումների իրականացման ժամկետները, իրականացվելիք աշխատանքները և գնահատումների արդյունքները:

70.Հաջորդ տարվա տարեկան ծրագիրը պետք է հաստատվի և Լիազոր մարմնին ներկայացվի մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը:

ԳԼՈՒԽ 22 Ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի վերանայում

71.Ժամանակ առ ժամանակ կազմակերպությունում կարող են տեղի ունենալ այնպիսի փոփոխություններ, որոնք կարող են պահանջել ներքին աուդիտի ստորաբաժանման ծրագրերի վերանայում և փոփոխում, ինչպես նաև յուրաքանչյուր տարի ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական ծրագիրը պետք է համալրվի ևս մեկ տարով:

72.Ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական և տարեկան ծրագրերը պետք է արտացոլեն այդ փոփոխություններն այնպես, որ համահունչ լինեն կազմակերպության փոփոխված գործընթացներին, ռիսկերին, նպատակներին և ծրագրերին:

73.Թեպետ ներքին աուդիտի պլանավորումը հաշվի է առնում ղեկավար անձանց հետ տեղի ունեցած բոլոր քննարկումները, այնուհանդերձ, կարող են լինել զարգացումներ, որոնք ծրագրերի մշակման պահին անհայտ էին: Այսպիսով, փոփոխությունները՝ որպես օրինակ կարող են ներառել.

1) որոշակի միավորում նոր տեղեկատվական տեխնոլոգիայի համակարգի ներդրում,

2) շինարարական խոշոր նախագիծ,

3) խոշոր խարդախություն,

4) վերակազմակերպման գործընթացներ:

74.Ներքին աուդիտի ծրագրերի բոլոր փոփոխությունները պետք է համաձայնեցվեն կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ, հաստատվեն ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից ու վավերացվեն կազմակերպության ղեկավարի

կողմից: Նման իրավիճակում, անհրաժեշտ է միավորել կատարման ենթակա աշխատանքները միևնույն աուդիտորական առաջադրանքում և դրանք իրականացնել մեկ փուլով:

75.Այն դեպքում, երբ աուդիտի ենթարկվող միավորում որոշ աշխատանքներ չեն նախատեսվել տարեկան ծրագրով և չեն իրականացվել արդեն իսկ ավարտված աուդիտորական առաջադրանքի աշխատանքների ընթացքում, անհրաժեշտ է իրականացնել ևս մեկ աուդիտորական առաջադրանք միևնույն տարվա ընթացքում, որը համարվում է կրկնակի աուդիտորական առաջադրանք: Կրկնակի աուդիտորական առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները ներգրավվում են չպլանավորված առաջադրանքների համար նախատեսված ռեսուրսներից:

Գլուխ 23 Ներքին աուդիտի կոմիտեի իրավունքներն ու պարտականությունները

76. Ներքին աուդիտի կոմիտեի լիազորությունները սահմանված են <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքով և ներքին աուդիտի գործունեությանն առնչվող այլ իրավաական ակտերով և սույն կանոնակարգով: կոմիտեն քննարկում է ստորաբաժանման ղեկավարի՝ կոմիտեի քարտուղարի կողմից կազմված հարցերը, որը նախապես համաձայնեցվում է նախարարի՝ կոմիտեի նախագահի հետ:

77.Կոմիտեի անդամները օրակարգի հետ կապված հարցերի պարզաբանման համար կարող են դիմել՝ ստորաբաժանման ղեկավարին: Գաղտնի բնույթի հարցերի պարզաբանման ժամանակ, այն կարող է իրականացվել միայն նախարարի համաձայնության դեպքում:

78. Կոմիտեի նիստը համարվում է կայացած, եթե դրան մասնակցում են անդամների պարզ մեծամասնությունը: Քվեարկության ժամանակ ձայների հավասար լինելու դեպքում կոմիտեի նախագահի ձայնը վճռորոշ է:

79. Կոմիտեի նիստը հրավիրվում է եռամսյակը մեկ անգամ՝ կոմիտեի նախագահի նախաձեռնությամբ, նախապես կոմիտեի քարտուղարի հետ քննարկելով օրակարգի հետ կապված հարցերը:

ԳԼՈՒԽ 24 Հայտնաբերված սխալներ

80.Հսկողության գործընթացի թերությունները կարող են վերաբերել հսկողության գործընթացների նախագծին և գործունեությանը: Թերությունը վերաբերում է հսկողության գործընթացի նախագծին, երբ անհրաժեշտ հսկողական տարրը բացակայում է կամ պատշաճ

կերպով նախագծված չէ և չի բավարարում իր նպատակին: Հսկողության գործընթացի թերությունը վերաբերում է վերջինիս անարդյունավետ գործունեությանը, երբ պատշաճորեն նախագծված հսկողության գործընթացը չի գործում իր նախագծի համաձայն կամ հսկողության գործընթացն իրականացնող անձը չունի համապատասխան լիազորություններ կամ որակավորումներ հսկողության գործընթացն արդյունավետորեն իրականացնելու համար:

81.Եթե թեստի արդյունքում ընտրանքում թերություններ չեն հայտնաբերվում, ապա թեսթի նպատակը կարող է համարվել իրականացված, և հետագա որևէ լրացուցիչ աշխատանք չի պահանջվում:

82.Եթե հայտնաբերվում է առնվազն մեկ թերություն, ապա անհրաժեշտ է դիտարկել հայտնաբերված սխալի բնույթը և հասկանալ, թե արդյոք հայտնաբերված թերությունը հանդիսանում է եզակի դեպք: Շատ կարևոր է նաև հաշվի առնել, թե արդյոք թերություն պարունակող հսկողության գործընթացի նպատակներին բավարարում է մեկ այլ հսկողության գործընթաց, թե՝ ոչ: Ներքին աուդիտորը կարող է նաև որոշում կայացնել ընդլայնել ընտրանքը մինչև վերջինիս կրկնապատիկը:

83.Եթե այլ թերություններ չեն հայտնաբերվում, ապա թեսթի նպատակը իրականացված է, և հետագա որևէ լրացուցիչ աշխատանք չի պահանջվում:

84.Հարկ է նաև ընդգծել, որ մանրամասների ստուգման թեստերը մեծամասամբ իրականցվում են ընտրանքային սկզբունքով: Ըստ էության թեստերի ընտրանքների կազմման մեթոդաբանությունը ներկայացված է սույն ուղեցույցի 236-ից 244-րդ կետերում:

ԳԼՈՒԽ 25 Աշխատանքների ուսումնասիրում և վերահսկում

85.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը առաջադրանքի աշխատանքային խումբ կազմելիս պետք է ընտրի առնվազն մեկ անձ, ով պատասխանատու է կատարված աշխատանքների վերահսկման համար: Մեծամասամբ այս գործառույթն իրականացվում է առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարների կողմից, որոնք իրենց հերթին վերահսկվում են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից:

86.Աշխատանքների ուսումնասիրումն ու վերահսկումը հանդիսանում է ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի շարունակական իրականացվող գործընթաց: Որակի ապահովումը չափազանց կարևոր է աուդիտորական գործունեության շրջանակներում: Իրականացրած աուդիտորական աշխատանքի ուսումնասիրումը պետք է հաստատի, որ առաջադրանքն իրականացվել է համաձայն ստանդարտների:

87.Աուդիտի յուրաքանչյուր առաջադրանքի համար իրականացրած աշխատանքները պետք է ուսումնասիրել ստորև նշված փուլերի ընթացքում՝ ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարի կողմից.

1) աուդիտի ենթարկվող միավորի ռիսկերի գնահատման փուլի ավարտից հետո,
2) առաջադրանքի աուդիտի շրջանակը որոշելուց հետո, մինչև առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարի՝ աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության հետ խնդիրների ամրագրմանը վերաբերող հանդիպումը,
3) աուդիտի աշխատանքային ծրագրի ներկայացումից հետո,
4) առաջադրանքի իրականացման փուլում թեստավորումն ավարտելուց հետո,
5) նախնական հաշվետվությունը պարտաստելուց հետո, մինչև առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարի՝ աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության հետ նախնական հաշվետվությունը քննարկելու նպատակով նշանակվող հանդիպումը,
6) ներկայացված առաջարկությունների գծով միջոցառումների ծրագիրը կազմելուց հետո՝ ներքին աուդիտի հաշվետվության ավարտման փուլում:

88.Վերահսկման գործընթացն իրականացնում է նույնապես կարևոր այլ գործառույթներ. առաջադրանքի աշխատանքային խմբի անդամների գիտելքիների, հմտությունների և այլ ունակությունների զարգացում, կադրային վերապատրաստումների իրականացում և աջակցում, ինչպես նաև աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում ուսուցում: Վերահսկման գործընթացը չի դադարում առաջադրանքների ավարտի հետ մեկտեղ, այն պետք է կրի շարունակական բնույթ և նպաստի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցների կարողունակության բարձրացմանը և պատշաճ մասնագիտական վերաբերմունքի դրսևորմանը:

ԳԼՈՒԽ 26. Աշխատանքների եզրափակում

89.Հայտնաբերված թերությունների վերաբերյալ ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խումբը կազմում է աուդիտի արդյունքների մասին արձանագրություն, որի միջոցով աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարը տեղեկանում է հայտնաբերված թերություններին: Այս գործընթացը կարելի է նաև իրականացնել առաջադրանքի իրականացման ընթացքում և չսպասել առաջադրանքի աշխատանքների ավարտին, եթե հայտնաբերված թերացումները իրենց բնույթով և նշանակալիությամբ պահանջում են ղեկավարության անհապաղ միջոցառումներ: Առաջադրանքի դիտարկումները և առաջարկություններն առաջ են գալիս առկա իրավիճակը պահանջվող իրավիճակի հետ համեմատելու արդյունքում: Արձանագրությունը պետք է պարունակի թերությունների հատկանիշները.

1) Չափանիշեր՝ գնահատման և/կամ ուսումնասիրության նպատակով կիրառվող ստանդարտներ, հիմք ընդունված նորմեր, չափման միավորներ կամ սպասումներ (ինչ պետք է լինի),
2) Պայման՝ փաստացի ապացույց, որը ներքին աուդիտորը հայտնաբերել է աուդիտի ընթացքում (ինչ է առկա),
3) Պատճառ՝ սպասվելիք և փաստացի պայմանների տարբերության հիմքը (ինչի պատճառով գոյություն ունի տարբերություն),
4) Ազդեցություն՝ այն ռիսկերը կամ վտանգները, որոնց առնչվում է կազմակերպությունը և/կամ այլք, քանի որ պայմանները համահունչ չեն սահմանված չափանիշներին (տարբերության ազդեցությունը): Ռիսկերի կամ ռիսկերի տեղի ունենալու հավանականության աստիճանը որոշելիս ներքին աուդիտորները պետք է հաշվի առնեն այն ազդեցությունը, որը առաջադրանքի ընթացքում հայտնաբերված թերությունները կարող են ունենալ կազմակերպության գործառնությունների և ֆինանսական հաշվետվությունների վրա:

90.Արձանագրությունը տրամադրվում է աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարությանը, որպեսզի վերջիններս որքան հնարավոր է շուտ ստանան թերությունների շտկման հնարավորություն:

ԳԼՈՒԽ 27. Վերջնական հանդիպում

91.Առաջադրանքի ընթացքում հայտնաբերված թերությունների մասին արձանագրությունը ներկայացնելուց հետո աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարը պետք է անցկացնի հանդիպում աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության հետ՝ քննարկելու հայտնաբերված թերությունները և առաջարկվող լուծումները: Այս փուլում աուդիտորը հնարավորություն ունի վերջնականապես համոզվել իր կողմից կատարված եզրակացությունների ճշգրիտ լինելու մեջ՝ լսելով մյուս կողմի պարզաբանումները և թերությունների հնարավոր պատճառները: Բացի դրանից այս հանդիպումը հանդիսանում է առաջադրանքի վերջնական հաշվետվության պատրաստման հիմք: Այս փուլը հադիսանում է աուդիտի ենթարկվող միավորի ստորաբաժանման տարածքում իրականացված աշխատանքների եզրափակիչ փուլ: Իրականացվող աշխատանքների նպատակն է աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարությանը տեղեկացնել հայտնաբերված թերացումները, ինչպես նաև ամփոփելու հայտնաբերված թերացումները, հնարավոր առաջարկությունները և լուծման եղանակները: Աուդիտի արդյունքների քննարկվող հարցերը չեն կարող անակնկալ լինել աուդիտի ենթարկվող միավորի համար, քանի որ դրանք պետք է ներկայացվեն և քննարկվեն աուդիտի իրականացման ընթացքում: Վերջնական հանդիպումը ներքին աուդիտորներին հնարավորություն է տալիս ճշտելու, թե արդյոք նրանք չեն սխալվել աուդիտի իրականացման ընթացքում հայտնաբերված խախտումների կամ շեղումների որակման և հայտանիշերի (չափանիշների) ընտրության հարցում: Վերջնական հանդիպման ընթացքում անհրաժեշտ է ձևավորել թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և քայլերը: Վերջնական հանդիպման մասին արձանագրությունը տրվում է մասնակից բոլոր կողմերին:

ԳԼՈՒԽ 28. Հաշվետվությունների պատրաստում

92.Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են տարբեր տեսակի հաշվետվություններում: Կարևոր է, որ հաշվետվությունները լինեն արդյունավետ՝ կազմակերպության գործունեության բարելավմանը նպաստելու և կազմակերպության համար հավելյալ արժեք ստեղծելու նպատակով:

93.Հաշվետվությունների միջոցով ներքին աուդիտորները պետք է փոխանցեն իրենց աշխատանքի որակը, նպաստեն կազմակերպությունում դրական փոփոխությունների իրականացմանը:

94.Առաջադրանքի կատարման վերջում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է կազմակերպության ղեկավարությանը տեղեկացնի աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների մասին:

95.Հաշվետվության սկզբունքներից մեկը կայանում է նրանում, որ առաջադրանքի իրականացման ընթացքում ի հայտ եկած բոլոր բացահայտումները պետք է հաշվի առնվեն առաջադրանքի հաշվետվությունում: Հաշվետվությունները կարող են ներկայացվել ինչպես միջանկյալ, այնպես էլ վերջնական:

ԳԼՈՒԽ 29. Առաջարկությունների ներկայացում

96.Հաշվետվությունում կատարված եզրակացությունների գծով պետք է նաև արտացոլվեն աուդիտի ենթարկվող միավորի առաջարկությունները, որը նա ներկայացնում է վերջնական հանդիպման ժամանակ: Հաշվետվությունում ներկայացված առաջարկությունները պետք է պարունակեն անհրաժեշտ հղումներ հաշվետվության համապատասխան բաժիններին:

97.Առաջարկությունները պետք է լինեն հստակ, տեղին, ժամանակին, ուղղված կոնկրետ աշխատակցին կամ միավորին՝ վերականգնման քայլեր իրականացնելու համար: Անհրաժեշտ է հստակ սահմանել աուդիտի ենթարկվող միավորից ակնկալվող քայլերը, որոնք հարկավոր են ներկայացված առաջարկությունների իրականացման համար:

98.Ներքին աուդիտի հաշվետվություններն առավել արդյունավետ դարձնելու համար նպատակահարմար է կիրառել առաջարկությունների դասակարգման համակարգ: Առաջարկությունները ներկայացնելիս կարելի է վերջիններիս կարևորությունը դասակարգել հետևյալ չափանիշներով.

1) Հիմնական, որը վերաբերում է հսկողության համակարգի հույժ կարևոր թերություններին և պետք է արժանանա կազմակերպության ղեկավարի, ներքին աուդիտի կոմիտեի և աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հրատապ ուշադրությանը:

2) Միջին, որը վերաբերում է հսկողության համակարգի կարևոր թերություններին: Թեև այս խմբում դասակարգված առաջարկությունները նույնպես կարող են պահանջել հրատապ լուծում, սակայն անհրաժեշտ չէ, որ դրանք անմիջապես կատարվեն կազմակերպության ղեկավարի, ներքին աուդիտի կոմիտեի և աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի կողմից:
3) Փոքր, որը վերաբերում է հսկողության համակարգի ավելի քիչ կարևոր թերություններին: Փոփոխությունները պետք է իրականացվեն գործունեության ընթացքում, սակայն չպետք է դիտարկվեն որպես առաջնային լուծում պահաջող հարցեր:

99.Բոլոր առաջարկություններն ամփոփ տեսքով պետք է ներառվեն գործողությունների ծրագրում համապատասխան ղեկավարների պատասխան քայլերի հետ մեկտեղ՝ նշելով բոլոր առաջարկությունների կատարման, թերությունների շտկման և գործողությունների իրականացման համար պատասխանատու անձանց:

100.Գործողությունների ծրագրի օրինակը ներկայացված է սույն ուղեցույցի 8-րդ հավելվածում:

101.Ներքին աուդիտորները պետք է ուշադրություն դարձնեն աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության պատասխանին և համաձայնեցված առաջարկությունների իրականացման վերջնաժամկետին: Պատասխանը ներառում է հետևյալ հարցերի պատասխանները.

1) արդյո՞ք աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության համար ընդունելի է ներքին աուդիտորի բացահայտումները,
2) արդյո՞ք աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության կողմից ընդունված գործողությունների ծրագիրը անդրադառնում է նշված թերություններին, թե՝ ոչ,
3) արդյո՞ք կազմակերպությունն ունի առաջարկություններն իրագործելու համար համապատասխան ռեսուրսներ և կարողություն:

102.Առաջարկությունների իրագործման վերջնաժամկետը պետք է լինի խելամիտ, որպեսզի աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարությունը հնարավորություն ունենա պատշաճորեն իրագործել կատարված առաջարկությունները:

ԳԼՈՒԽ 30. Զգայուն տեղեկատվության տրամադրում

103.Ներքին աուդիտորներն իրենց գործունեության ընթացքում կարող են հայտնաբերել կազմակերպության համար զգայուն տեղեկատվություն, որը կարող է հանգեցնել նշանակալի հետևանքների: Այդ տեղեկատվությունը կարող է վերաբերել յուրացումներին, կոռուպցիոն դեպքերին, չարաշահումներին, խարդախության կամ այլ անօրինականությունների դեպքերին:

104.Նման պարագայում ներքին աուդիտորը պետք է ներկայացնի այդ տեղեկատվությունը համապատասխան իրավապահ մարմիններին: Ներքին աուդիտորը կարող է կանգնել երկընտրանքի առջև՝ արդյոք հարկավոր է տեղեկատվությունը հայտնել հաշվետվողականության սովորական շղթայից կամ նույնիսկ կազմակերպությունից դուրս գտնվող անձանց:

105.Հաշվետվողականության սովորական շղթան կարող է շրջանցվել որոշ զգայուն տեղեկատվության ի հայտ գալու դեպքում, նույնիսկ այն դեպքում, երբ կազմակերպության ղեկավարը, ներքին աուդիտի կոմիտեն և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը համաձայնության են գալիս, թե ինչ գործողություններ է պետք ձեռնարկել:

106.Ներքին աուդիտորը պարտավոր է բարեխղճորեն գնահատել իր կողմից արված եզրակացությունների բոլոր ապացույցները և որոշել, թե արդյոք գոյություն ունի կազմակերպության շահերը, հանրությանը և հասարակական մարմինները պաշտպանելու լրացուցիչ գործողությունների պահանջ: Ներքին աուդիտորը պետք է հաշվի առնի վարքագծի կանոններով նախատեսված գաղտնիության պահպանման սկզբունքը՝ տեղեկատվության արժեքը և պատկանելիությունը կարևորելու, ինչպես նաև չլիազորված բացահայտումից խուսափելու համար, եթե առկա չէ այդպիսի բացահայտման իրավական կամ մասնագիտական պարտականություն: Այս որոշման կայացման գործընթացում, անհրաժեշտության դեպքում, աուդիտորը կարող է ստանալ իրավաբանական կամ այլ մասնագիտական խորհրդատվություն: Նման մասնագիտական խորհրդատվությունը կարող է օգտակար լինել հանգամանքները տարբեր տեսանկյուններից ուսումնասիրելու համար, ինչպես նաև հնարավոր գործողությունների հավանական ազդեցության և հետևանքների վերաբերյալ կարծիքներ տրամադրելու համար:

ԳԼՈՒԽ 31. Գործունեության տարեկան հաշվետվություն

107.Ներքին աուդիտի ստորաբաժանումը պետք է կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի տարեկան հաշվետվություններ, որոնք ամփոփում են տարվա ընթացքում կատարած ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեությունը:

108.Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը պետք է ներկայացվի կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը: Աուդիտի տարեկան հաշվետվությունները հնարավորություն են ընձեռում կատարել համեմատություն ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողականի և աուդիտի տարեկան ծրագրի միջև և բացահայտել ի հայտ եկած շեղումները և դրանց պատճառները: Եթե կատարողականի և աուդիտի տարեկան ծրագրի միջև առկա են շեղումներ, ապա, պարզելով այդ շեղումների պատճառները, հարկավոր է որոշում կայացնել ներքին աուդիտի ռազմավարական ծրագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Ներքին աուդիտի գործունեության արդյունավետության գնահատման նպատակով՝ անհրաժեշտ է նաև որոշել աուդիտի ծածկույթը՝ աուդիտի միջավայրի տարրերի ցանկի համեմատ:

109.Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության տարեկան հաշվետվությունը նաև ներառում է վերլուծություն վերջինիս կողմից ներկայացված առաջարկությունների շնորհիվ առաջացած օգուտների և խնայողությունների հանրագումարի և իր կողմից կրած ծախսերի հանրագումարի համեմատության միջոցով:

ԳԼՈՒԽ 32. Լիազոր մարմնին ներկայացվող հաշվետվություններ

110.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ներքին աուդիտի ստորաբաժանման ստեղծման, վերակազմակերպման կամ փոփոխության դեպքում պետք է Լիազոր մարմնին ներկայացնի հաշվետվություն :

111.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է Լիազոր մարնին ներկայացնի հաշվետվություն:

112.Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է տարեկան մեկ անգամ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի հաշվետվություն Լիազոր մարմնին ներքին աուդիտորների պաշտոնի նշանակման, փոփոխության, որակավորումների և վերապատրաստումների, ինչպես նաև ներքին գնահատումների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 33. Վերստուգման գործընթաց

113.Ներքին աուդիտի իրականացման արդյունքներով կազմված գործողությունների ծրագրի հիման վրա կազմակերպության ղեկավարի հրամանով հաստատվում են այն միջոցառումները, որոնք պետք է իրականացվեն ներքին աուդիտի առաջադրանքի ընթացքում բացահայտված խախտումների շտկման ուղղությամբ: Նշված հրամանով հաստատված ժամանակացույցի նկատմամբ հսկողությունը իրականացնում է ներքին աուդիտի ստորաբաժանումը: Աուդիտի ենթարկվող միավորը պարտավոր է հրամանում նախատեսված ժամկետում վերացնել արձանագրված շեղումներն ու բացթողումները և այդ մասին գրավոր տեղեկացնել ներքին աուդիտի ստորաբաժանմանը: Վերստուգման գործընթացը հանդիսանում է առաջադրանքի իրականացման աշխատանքների վերջնական փուլը: Ներքին աուդիտի ստորաբաժանման կարևոր դերը կայանում է նաև նրանում, որ այն պետք է համոզվի, որ աուդիտի ենթարկվող միավորն իրականացրել է ներկայացված առաջարկությունները:

114.Ներքին աուդիտորները պետք է գնահատեն ներկայացված առաջարկությունների կիրառմանն ուղղված ներքին աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության կողմից իրականացված շտկման գործողությունների համապատասխանությունը, արդյունավետությունը և ժամանակին լինելը:

115.Կատարված աշխատանքների վերաբերյալ ստացված տեղեկատվությունը ներքին աուդիտորների կողմից պետք է գնահատվի և կայացվի որոշում դրանց արդյունավետության և նպատակայնության մասին, ինչպես նաև սույն ուղեցույցով սահմանված կարգով որոշեն մնացորդային ռիսկի աստիճանը: Այնուհետև կարող է նախատեսել շտկման այլ միջոցառումներ այդ թվում՝ հաջորդ տարվա ընթացքում իրականացվելիք աուդիտորական աշխատանքների մաս, որը ներառված է ներքին աուդիտի ռազմավարական ծրագրում, կամ որպես առանձին առաջադրանք, եթե տվյալ ոլորտում որևէ այլ աշխատանք չի պլանավորվել: Եթե ստացված

տեղեկատվությունն ամբողջությամբ վկայում է թերությունների վերացման մասին, ապա ներքին աուդիտորներն կարող են որոշում կայացնել այդ տեղեկատվությունն ի գիտություն ընդունելու մասին և այն օգտագործել հետագա կառավարչական համակարգերի գնահատման համար:

116.Եթե հաջորդ տարի չի նախատեսվում կատարել որևէ առաջադրանք նախորդ տարվա առաջադրանքի շրջանակներում ներկայացված առաջարկությունների իրականացումը աուդիտի ենթարկելու նպատակով, ապա ներքին աուդիտի ստորաբաժանումը կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին պետք է ներկայացնի ամփոփ հաշվետվություն այն մասին, թե ինչպիսի առաջընթաց է արձանագրվել նախկին առաջարկությունների իրականացման հարցում:

117.Վերստուգման գործընթացը չափազանց կարևոր է, քանի որ, եթե կազմակերպության աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարությունն արդյունավետ ձևով չիրականացնի ներկայացրած առաջարկությունները, ապա կազմակերպության գործունեությունը չի բարելավվի:

118.Վերստուգման գործընթացի իրականացման սկիզբ կարելի է համարել ներքին աուդիտի աուդիտորական առաջադրանքի հաշվետվության մաս կազմող լրացված գործողությունների ծրագիրը:

119.Թեպետ, ներքին աուդիտի հաշվետվությունում ներկայացված բոլոր առաջարկություններն էլ կարևոր են, այնուհանդերձ, որոշ առաջարկություններ կարող են լինել ավելի կարևոր քան մյուսները: Ուստի առաջարկությունները դասակարգվում են ըստ կարևորության՝ ելնելով դրանց ռիսկի աստիճանից:

120.Ներքին աուդիտի վերստուգման գործընթացի ծավալը կախված է.

1) աուդիտի ենթարկվող միավորի գործողությունների ծրագրի շրջանակներից,

2) շտկման գործողություններ չիրականացնելու պատճառով բացասական դեպքի տեղի ունենալու ռիսկայնությունից,

3) հայտնաբերված թերությունների կարևորությունից,

4) աուդիտի ենթարկված գործընթացը բարելավելու հետ կապված ծախսերից և ջանքերից:

121. Վերստուգման գործընթացի արդյունավետ ընթացակարգերը ներառում են.

1) ղեկավարության պատասխանների համաձայն վերջինիս կողմից իրականացված գործողությունների պատշաճության գնահատականը,

2) տեղեկատվությունն այն մասին, որ կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն տեղյակ են, որ ներքին աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին չի հաջողվել իրականացնել գործողությունների ծրագիրը, որի հետևանքով կազմակերպությունն ընդունել է առաջարկությունների չիրագործման ռիսկերը,

3) ներքին աուդիտի եզրակացություններում ներկայացված առաջարկությունների իրականացման արդյունքում ակնկալվող արդյունքի (ստեղծվող հավելյալ արժեքի) գնահատումը:

122. Կազմակերպության ղեկավարը հանձնարարում է բոլոր համատեղ համաձայնեցված առաջարկությունների իրականացումը: Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կազմակերպության ղեկավարին ներկայացնում է սահմանված գործողությունների իրականացման ընթացքի մասին տեղեկատվություն յուրաքանչյուր առաջարկության իրականացման վերջնաժամկետից մեկ շաբաթ առաջ:

123. Եթե առաջարկությունների իրականացման համար պահանջվում է մեկ տարուց ավելի ժամանակ, ապա ներքին աուդիտի ստորաբաժանումը պետք է գնահատի տեղի ունեցած առաջընթացը, այլ ոչ թե սպասի, մինչև համաձայնեցված ժամկետի լրանալը: Այդ նպատակով գործողությունների իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումը պետք է իրականացված յուրաքանչյուր փուլի մասին, իսկ այն դեպքում երբ աշխատանքը հնարավոր չէ բաժանել փուլերի, ապա յուրաքանչյուր եռամսյակի տվյալներով տեղեկատվությունը փոխանցի ներքին աուդիտի ստորաբաժանում :

124. Կազմակերպությունը պետք է ունենա հստակ սահմանված գործընթացներ՝ ներքին աուդիտի ստորաբաժանման հաշվետվության գործողությունների ծրագրում ներառված յուրաքանչյուր առաջարկության պատշաճ կատարումն ապահովելու համար:

ԳԼՈՒԽ 34. Աուդիտի փաստաթղթավորման սկզբունքներ

125.Աուդիտի աշխատանքային փաստաթղթերը կազմվում են յուրաքանչյուր առաջադրանքի իրականացման ընթացքում: Աուդիտի փաստաթղթերի տեսակները և ծավալը կախված են կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման մեծությունից և կազմակերպության առանձնահատկություններից: Ամեն դեպքում, գոյություն ունեն ընդհանուր սկզբունքներ, որոնք պարտադիր կարգով ենթակա են կիրառման աշխատանքային փաստաթղթերի կազմման համար:

ԳԼՈՒԽ 35. Հետևողականություն և ստանդարտացում

126.Ներքին աուդիտի փաստաթղթերի օգտագործումը ներքին աուդիտի ստորաբաժանման ներսում պետք է իրականացվի հետևողականորեն: Կազմակերպության ներքին աուդիտի կանոնակարգով պետք է սահմանվեն ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքային փաստաթղթերի հետ կապված ընթացակարգեր, ինչպես նաև դրանց ձևաչափերը կամ պարտադիր ներառման տեղեկատվության ցանկը: Ստանդարտացումը ապահովում է հստակ ըմբռնում և շարունակականություն, ինչպես նաև բարելավում է աուդիտի նախապատրաստական և բուն աշխատանքները:

127.Ցանկացած դեպքում աուդիտի ստանդարտ աշխատանքային փաստաթղթերի կիրառումը չպետք է հանգեցնի աուդիտորների կողմից սահմանափակ մոտեցման ցուցաբերմանը: Անհրաժեշտության դեպքում ներքին աուդիտորները պետք է կարողանան ազատորեն ընտրել ստանդարտացված աշխատանքային փաստաթղթերի ձևերը՝ հաշվի առնելով առաջադրանքի առանձնահատկությունները:

ԳԼՈՒԽ 36. Ճշգրտություն

128.Ոչ ճշգրիտ գրանցումները բացասաբար են անդրադառնում աուդիտի վրա: Ավելին, դրանց պատճառով անհնար է դառնում առաջադրանքի նպատակների իրականացումը: Գրանցումներում պետք է հստակ նկարագրվեն կատարված աշխատանքները, եզրակացությունները և դրանց հիմնավորումները և այն, թե ինչպես է այդ ամենն ապահովում առաջադրանքի նպատակների իրականացումը: Ձևակերպումները և փաստաթղթերի ձևերը չպետք է որևէ թյուրիմացության տեղիք տան:

ԳԼՈՒԽ 37. Ամբողջականություն

129.Աշխատանքային փաստաթղթերը պետք է լինեն բավարար չափով մանրամասնեցված և պարունակեն առաջադրանքի իրականացման աշխատանքների ամբողջ ընթացքի նկարագրությունը: Միևնույն ժամանակ, փաստաթղթերը չպետք է լինեն չափից ավելի մանրամասն, ինչը կարող է անհասկանալի դարձնել դրանց բովանդակությունը:

ԳԼՈՒԽ 38. Փաստաթղթերը կազմող անձիք և վերահսկումը

130.Առաջադրանքի յուրաքանչյուր փաստաթղթի վրա նշվում է փաստաթուղթը կազմող անձի անունը, ազգանունը և կազմման ամսաթիվը: Բացի այդ, որոշակի տեղ է հատկացվում առաջադրանքի իրականացման նկատմամբ վերահսկում իրականացնող անձի գրանցումների համար, մասնավորապես, վերահսկող անձի անունը և վերահսկման ամսաթիվը: Առաջադրանքի նկատմամբ վերահսկում իրականացնող անձը պետք է հավաստիանա, որ.

1) որևէ աշխատանք չի մնացել անկատար,

2) փաստաթղթերում արտացոլված աշխատանքները համապատասխանում են տրված հրահանգներին,

3) փաստաթղթերը և կատարված աշխատանքը համապատասխանում են ներքին աուդիտի ստանդարտներին,

4) փաստաթղթերում գրանցված աշխատանքները բավարար են առաջադրանքի նպատակների իրականացման համար,

5) կարծիքները և եզրակացությունները հիմնավորվում են աուդիտորական ապացույցներով:

ԳԼՈՒԽ 39. Կառուցվածք

131.Աուդիտորական առաջադրանքի իրականացման ընթացքում կազմված, պատճենահանված կամ այլ կերպ ստացված բոլոր փաստաթղթերը պետք է միավորվեն աուդիտի իրականացման աշխատանքային փաստաթղթերի փաթեթում: Աշխատանքային փաստաթղթերը պետք է կառուցված լինեն այնպես, որ հնարավոր լինի հետևել մտքի կամ գործողության տրամաբանական զարգացմանը: Անհրաժեշտ է օգտագործել համարանիշներ ու

բովանդակության ցանկեր՝ փաստաթղթերից օգտվելու և նրանց միջև կապը որոշելու նպատակով:

ԳԼՈՒԽ 40. Գաղտնիություն և ապահովություն

132.Աուդիտորները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն փաստաթղթերի գաղտնիության և ապահովության պահպանմանը: Գաղտնիության և ապահովության, պահպանման և օգտագործման վերաբերյալ կազմակերպության ներքին ընթացակարգերը վերաբերում են նաև ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքային փաստաթղթերին: Այն դեպքում, երբ աուդիտի փաստաթղթերը պարունակում են գաղտնի տեղեկատվություն, ապա վերջիններիս նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառվում պահպանման գաղտնիության և/կամ անվտանգության կանոնները:

ԳԼՈՒԽ 41. Աուդիտորական ապացույց

133.Աուդիտորական ապացույցն այն տեղեկատվությունն է, որը ձեռք է բերվում առաջադրանքի կատարման ընթացքում՝ փաստաթղթերի զննման, աշխատակիցների հետ հարցազրույցների կամ առանձին գործարքների ուսումնասիրման արդյունքում:

134.Աուդիտորական ապացույցը պարզապես փաստաթուղթ չէ. այն հանդիսանում է աուդիտի գործընթացի հույժ կարևոր մաս, որը հնարավորություն է ընձեռում մշակել խելամիտ եզրակացություններ, որոնց վրա էլ հիմնվելու է հետագա դատողությունը: Առանց բավարար անհրաժեշտ ապացույցների աուդիտորի եզրակացությունները կարող են համարվել զուտ ենթադրություններ՝ առանց համարժեք հիմնավորված դրույթների: Նման դեպքերին պետք է անդրադարձ կատարի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը:

135.Աուդիտի ապացույցի բավարար անհրաժեշտ լինելը կախված է.

1) հարցի կարևորությունից,

2) նախորդ առաջադրանքների ընթացքում ձեռքբերված փորձից և կազմակերպության կամ միավորի գործունեության իմացությունից,

3) առաջադրանքի ընթացքում կատարված այլ աշխատանքից քաղված բացահայտումներից.

4) առկա տեղեկատվության աղբյուրից և հուսալիությունից,

5) ներքին հսկողության համակարգերի բնույթից, ներառյալ՝ հսկողության ընդհանուր միջավայրը:

136.Ապացույցի հուսալիությունը կախված է ապացույցի ձեռքբերման աղբյուրից: Աուդիտորական ապացույցը դառնում է էլ ավելի հուսալի, երբ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունները հաստատում են այդ ապացույցի ճիշտ լինելը կամ էլ համընկնում են այդ ապացույցի հետ:

137.Երբ մեկ աղբյուրից ստացված աուդիտի ապացույցը չի համընկնում մեկ այլ աղբյուրից ստացված տեղեկատվության հետ, անհրաժեշտ է որոշել, թե ինչպիսի լրացուցիչ այլ աշխատանք է պետք կատարել նման անհամապատասխանությունը վերացնելու համար:

138.Եթե աուդիտորական ապացույցի հուսալիությունը կախված է առանձին հանգամանքներից, ստորև նշված ցուցումներն օգնում են գնահատել այդ ապացույցի հուսալիությունը.

1) փաստաթղթերի և գրավոր ներկայացումների տեսքով ապացույցն ավելի հուսալի է, քան բանավոր ներկայացումները,

2) փաստաթղթերի բնօրինակներն ավելի հուսալի են, քան պատճենահանված և ֆաքսով ուղարկվածները,

3) աուդիտի ենթարկվող միավորի գրանցումներից քաղված աուդիտորական ապացույցն ավելի հուսալի է, երբ հաշվապահական հաշվառման և ներքին հսկողության համակարգերը գործում են արդյունավետ,

4) աուդիտորների կողմից աղբյուրից ուղղակիորեն ստացված ապացույցն ավելի հուսալի է, քան աուդիտի ենթարկվող միավորի միջոցով կամ վերջինիս կողմից ստացված ապացույցը,

5) արտաքին աղբյուրներից (երրորդ կողմերից) ստացված աուդիտորական ապացույցն ավելի հուսալի է, քան աուդիտի ենթարկվող միավորի գրանցումներից ստացվածը,

6) աշխատանքային փաստաթղթերում ներառված մանրամասները նպաստում են աուդիտորական ապացույցի հուսալիությանը: Օրինակ՝ հաշիվ-ապրանքագրերը ստուգելիս անհրաժեշտ է գրանցել ստուգվող գրառումների ճշգրիտ մանրամասները հետևյալ կերպ.

ա. հաշիվ ապրանքագրի համարը,

բ. փաստաթղթերի այն փաթեթը, որում պահվում է հաշիվ ապրանքագիրը,

գ. եթե ապացույցը ձեռք է բերվում աուդիտի ենթարկվող միավորի աշխատակիցների հետ հարցազրույցների միջոցով, ապա անհրաժեշտ է գրանցել.

աա. այն անձի անունը, ազգանունը, ում հետ տեղի է ունեցել հարցազրույցը,

աբ. հարցազրույցի ամսաթիվը,

ագ. հաղորդակցվող աշխատակցի պաշտոնը կամ այն դերը, որ նա ունի կազմակերպությունում,

ադ. քննարկված հարցերի շրջանակը,

աե. աշխատակցի կողմից տրամադրված պատասխանները:

7) Բացահայտումները հիմնավորող աուդիտորական ապացույցը պետք է գրանցվի հնարավորինս շուտ՝ նախընտրելի է տեղեկատվության ստանալու պահին:

ԳԼՈՒԽ 42. Աշխատանքային փաստաթղթերի պահպանումը

139.Այն տեղեկատվությունը, որը վերաբերում է աուդիտորական աշխատանքին և որի վրա հիմնված է աուդիտորական ապացույցը, պահվում է աուդիտի աշխատանքային փաստաթղթերի փաթեթում: Հաճախ անհրաժեշտություն է առաջանում աշխատանքային փաստաթղթերը հիմնավորել աուդիտի ենթարկվող միավորից ձեռքբերված լրացուցիչ փաստաթղթերով, որոնք կարող են լինել էլեկտրոնային և/կամ թղթային տեսքով:

140.Այդ լրացուցիչ փաստաթղթերը (օրինակ՝ բիզնես ծրագրեր) պահպանելու մասին որոշումն առանձին մասնագիտական դատողության խնդիր է, որն, այնուհանդերձ, պետք է իրականացնել ստորև նշված չափորոշիչների շրջանակներում.

1) փաստաթղթերը չեն պահվում պարզապես այն նպատակով, որ դրանք դիտարկվել են առաջադրանքի իրականացման ընթացքում: Օրինակ՝ տասը հաշիվ- ապրանքագիր ստուգելուց հետո, անհրաժեշտություն չկա դրանց բոլորի պատճենները կցել աուդիտի

աշխատանքային փաստաթղթերի փաթեթին, եթե դրանցում չի երևում, որ թերություններ են տեղի ունեցել (օրինակ՝ հսկողական տարրի թերացում),

2) մշտական բնույթ ունեցող փաստաթղթերը պետք է պահվեն աուդիտի փաթեթում: Դրանք կարող են ձեռքբերվել տեղեկատվությունների այնպիսի աղբյուրներից, որոնք ցանկացած պահին հասանելի են հասարակության բոլոր անդամների համար: Օրինակ՝ օրենքներ, իրավական ակտերը և այլն,

3) հարկավոր է գնահատել զգայուն տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի աուդիտի ենթարկվող միավորի կողմից ոչնչացման ռիսկը՝ նախքան աուդիտորի կողմից այդ փաստաթղթերի զննումը: Նմանատիպ փաստաթղթերի բնօրինակների կամ պատճենների պահպանումն աուդիտի աշխատանքային փաստաթղթերի փաթեթում կարևորագույն խնդիրներից է, ուստի դրանցից օգտվելը և դրանց հասանելիությունը պետք է խիստ սահմանափակվի կազմակերպության քաղաքականությամբ:

ԳԼՈՒԽ 43. Աուդիտի իրականացման հետ կապված ռիսկերը

141.Աուդիտի իրականացման հետ կապված նույնպես կարող են առաջանալ որոշակի ռիսկեր, որոնք կարող են խոչընդոտել ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության արդյունավետ իրականացմանը և սահմանված նպատակների իրագործմանը: Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի իրականացման բուն պատճառներից մեկն աուդիտի իրականացման հետ կապված ռիսկերի չեզոքացումն է:

142.Աուդիտի պլանավորման փուլում անհրաժեշտ է բացահայտել և գրավոր ձևակերպել աուդիտի իրականացման հետ կապված հիմնական ռիսկերը և դրանց չեզոքացմանն (նվազեցմանն) ուղղված միջոցառումները, իսկ աուդիտի իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել այդ ռիսկերի շարունակական կառավարումը:

143.Ընդհանուր առմամբ աուդիտի իրականացման հետ կապված ռիսկերը կարելի է բաժանել երեք խմբի.

1) աուդիտի ձախողման ռիսկեր,
2) սխալ հավաստիացում տալու ռիսկեր,
3) հեղինակությունը վտանգող ռիսկեր (բարի համբավի վտանգման ռիսկ):

144.Ներքին աուդիտի ստորաբաժանումն, անկախ հավաստիացման և խորհրդատվական ծառայություններ մատուցելիս, ապահովագրված չէ վերոնշյալ ռիսկերից, ուստի, պետք է ձեռնարկի պատշաճ հսկողության գործընթացներ՝ այդ ռիսկերից խուսափելու նպատակով: Այդ գործընթացները կարող են ընդգրկել.

1) ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական որակավորումների, գիտելիքների, հմտությունների և այլ ունակությունների մանրակրկիտ ստուգման իրականացում,
2) որակի երաշխավորման և բարելավման ծրագրի իրականացում,
3) ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական և տարեկան ծրագրերի արդյունավետ իրականացում, պարբերական վերանայում ու գնահատում,
4) ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող չափորոշիչների պարբերական վերանայում,
5) աուդիտորական առաջադրանքի և գործողությունների ծրագրի արդյունքների ամփոփում և անհրաժեշտության դեպքում ռազմավարական ծրագրի վերանայում,
6) անկախության և օբյեկտիվության սկզբունքների անվերապահ պահպանում և վերահսկում,
7) ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսների պարբերական վերագնահատում և պատշաճ բաշխում:

145.Ստորև ներկայացված են աուդիտի իրականացման հետ կապված ռիսկերի մի քանի օրինակներ.

1) առանցքային ռիսկերը չեն բացահայտվել, կամ առանցքային հսկողական տարրերը չեն գնահատվել, ինչը նշանակում է, որ առաջադրանքի իրականացման ընթաքում կարևոր հարցերը բաց են թողնվել կամ սխալ հավաստիացում է տրվել՝ հմտությունների, փորձառության, մասնագիտական գիտելիքների կամ վերահսկման բացակայության պատճառով,
2) աուդիտի շրջանակները չափից ավելի լայն կամ նեղ են, ինչը հանգեցրել է նրան, որ նշանակալի միավորները անհրաժեշտ մանրամասնությամբ չեն գնահատվել կամ չափից ավելի մանրակրկիտ են գնահատվել, ինչը հանգեցրել է ռեսուրսների անարդյունավետ օգտագործման և էական բացթողումների և խեղաթյուրումների անտեսման,

3) առկա են շահերի իրական կամ թվացյալ բախումներ, որոնք բացասաբար են անդրադարձել աուդիտի օբյեկտիվության և աուդիտի արդյունքների վրա,
4) աուդիտի աշխատանքները բավարար խորությամբ չեն իրականացվել ղեկավարության առանձնակի ակնկալիքները բավարարելու կամ մտահոգող հարցերը կարգավորելու պատճառով,
5) ղեկավարությունն աջակցություն չի ցուցաբերել ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքներին, որի պատճառով հնարավոր չէ շարունակել աուդիտի աշխատանքները,
6) որոշ դեպքերում հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում ներգրավել աուդիտի կարևոր աշխատակիցներին և այդ պատճառով առաջադրանքը ձախողվել է, օրինակ, երկարաժամկետ բացակայության, հիվանդության, աշխատանքից ազատման պատճառով, ինչը չէր կարող նախատեսվել ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական կամ տարեկան ծրագրերով,
7) ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները ընդգրկվել են այլ ստորաբաժանումների աշխատանքներում, ինչը հանգեցրել է անկախության էական խախտումների և ներքին աուդիտի ստորաբաժանման հեղինակության կորստի,
8) աուդիտի աշխատանքները չեն ավարտվել ծրագրով սահմանված ժամկետներում, ինչը նշանակում է, որ բացահայտված փաստերը կորցրել են արդիականությունը նախքան աուդիտի ավարտը:

ԳԼՈՒԽ 44. Ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր

146.Կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պատասխանատու է ներքին աուդիտի գործունեության ընթացքում ներքին աուդիտի ստանդարտներում նախատեսված բոլոր աշխատանքներն ընդգրկելու և դրանք <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքին համապատասխանեցնելու համար: Այդ նպատակով վերջինս պետք է կազմակերպի և իր լիազորությունների շրջանակներում իրականացնի, ինչպես նաև աջակցի ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի իրականացմանը (այսուհետև՝ որակի ծրագիր):

147.Որակի ծրագիրը պետք է կազմակերպության ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և այլ շահագրգիռ կողմերին տրամադրի հիմնավորված հավաստիացում այն մասին, որ կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանումը.

1) գործում է իր կանոնակարգի համաձայն, որն, իր հերթին, համապատասխանում է <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքին, ստանդարտներին և վարքագծի կանոններին,

2) գործում է արդյունավետ և օգտավետ,

3) կազմակերպության ղեկավարի, ներքին աուդիտի կոմիտեի և այլ շահագրգիռ խմբերի կողմից դիտվում է որպես հավելյալ արժեք ստեղծող և կազմակերպության գործառնությունները բարելավող գործունեություն:

148.Այս գործընթացները ներառում են պատշաճ վերահսկման ու որակի երաշխավորման շարունակական դիտարկում (մոնիթորինգ), պարբերական ներքին և արտաքին գնահատումներ:

149.Որակի ծրագիրը պետք է կառուցված լինի այնպես, որ ապահովի մասնագիտական կարողունակության օպտիմալ մակարդակը: Աուդիտորական առաջադրանքներ իրականացնողները չպետք է ուսումնասիրեն իրենց կողմից կատարված աշխատանքը:

ԳԼՈՒԽ 45. Վերահսկման և ընթացիկ դիտարկման (շարունակական) գործընթաց (մոնիթորինգ)

150.Վերահսկման և ընթացիկ դիտարկման (շարունակական) գործընթացը (մոնիթորինգ) իրականցվում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից աուդիտի իրականացման բոլոր փուլերի ընթացքում: Յուրաքանչյուր աշխատանք (ռազմավարական ծրագրի կազմում, տարեկան ծրագրի կազմում, աուդիտի աշխատանքային ծրագրի կազմում, առաջադրանքի իրականացում, աշխատանքների ամփոփում, հաշվետվությունների կազմում) գնահատվում է այդ աշխատանքի կատարմանը մասնակցած աուդիտորների աշխատանքի որակը: Գնահատումը իրականացվում է 100 միավոր սանդղակով: Աշխատանքների գնահատման չափանիշները պետք է սահմանված լինեն կազմակերպության ներքին աուդիտի կանոնակարգով:

151.Առանձին գնահատվում է նաև ներքին աուդիտորների վերապատրաստման և ուսուցման արդյունքները: Տվյալ դեպքում աուդիտորներին տրվում են մասնագիտական հարցերից կազմված հարցաշարեր իրենց 2 սխալ և մեկ ճիշտ պատասխանով: Ներքին աուդիտի կանոնակարգով պետք է սահմանվեն նշված ստուգաթերթերի միջոցով թեստավորման հաճախականությունը, թեմաները և յուրաքանչյուր թեստի հարցերի քանակը՝ ելնելով հետևյալ չափանիշներից՝ մեկ անգամ տրվող հարցերը չեն կարող պակաս լինել 5-ից, թեստավորումը պետք է իրականացվի առնվազն շաբաթը մեկ անգամ, իսկ թեստերի արդյունքները պետք է ամփոփվեն նվազագույնն ամսական կտրվածքով: Թեստերի հարցաշարը հաստատում է կազմակերպության ղեկավարը: Ճիշտ պատասխանների քանակների հարաբերակցությունից ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը սահմանում է այն ներքին աուդիտորների ցանկը, որոնք պետք է առաջիկայում սխալ պատասխանների թեմաներով վերապատրաստում կամ ուսուցում անցնեն:

152.Ներքին աուդիտի ստորաբաժանումում տարեկան առնվազն 4 անգամ պետք է իրականացվեն նաև տեղեկատվական տեխնելոգիաների իմացության թեստավորումներ, համակարգչային նորամուծությունների և հնարավորությունների թեմաներով: Նշված թեստերի արդյունքների հիման վրա պետք է հետագա բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացվեն:

ԳԼՈՒԽ 46. Արտաքին գնահատում

153.Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության որակի արտաքին գնահատումների միջոցով գնահատական է տրվում <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի, ստանդարտների և վարքագծի կանոնների հետ ներքին աուդիտի գործունեության համապատասխանության վերաբերյալ և ներկայացնում են առաջարկություններ ներքին աուդիտի գործունեության բարելավման վերաբերյալ: Արտաքին ուսումնասիրությունները կարող են մեծ արժեք ներկայացնել ներքին աուդիտի ստորաբաժանման համար: Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության որակի արտաքին գնահատումներն իրականացվում են Լիազոր մարմնի կողմից՝ յուրաքանչյուր հինգ տարին առնվազն մեկ անգամ: Գնահատման ավարտից հետո հնգօրյա ժամկետում ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության որակի վերաբերյալ պաշտոնական հաշվետվություն է ներկայացվում կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին:

154.Կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության որակի արտաքին գնահատումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Լիազոր մարմինը:

155.Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման նպատակն է գնահատել.

1) ներքին աուդիտի ստորաբաժանման անկախությունը և անկողմնակալությունը,

2) ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրի մշակման մոտեցումների արդյունավետությունը և նպատակահարմարությունը,

3) ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքի որակի ներքին վերահսկման համակարգի վիճակը,

4) կազմակերպություններում ներքին աուդիտի գործունեության համապատասխանությունը <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքով սահմանված նորմերին, այլ իրավական և գերատեսչական նորմատիվ ակտերին,

5) աշխատանքի կատարողականի գնահատման նորմերի կատարման աստիճանը:

156.Լիազոր մարմինը ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության որակի արտաքին գնահատումն իրականացնում է հետևյալ գործառույթների ապահովմամբ.

1) կազմակերպություններից ստանում և քննության է առնում աուդիտորական եզրակացությունների և/կամ պաշտոնական արձանագրությունների և/կամ ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության իրականացման հետ կապված առարկությունները և բողոքները,

2) ստանում է ներքին աուդիտի ստորաբաժանման տարեկան ծրագրերը և տարեկան հաշվետվությունները, կազմակերպություններից պահանջում և ստանում է բացատրություններ և այլ տեղեկություններ կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման, այդ թվում՝ տարեկան ծրագրի ու հաշվետվությունների վերաբերյալ,

3) ՀՀ կառավարության կողմից, սահմանված կարգով, կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության համապատասխանությունը ներքին աուդիտի

օրենսդրությամբ սահմանված նորմերին գնահատելու նպատակով իրականացնում է ուսումնասիրություններ,

4) կազմում և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացնում տարեկան հաշվետվություն ներքին աուդիտի ստորաբաժանումների գործունեության հիմնական արդյունքների մասին:

157.Ներքին աուդիտի ստորաբաժանման որակի արտաքին գնահատումն իրականացվում է երկու եղանակով.

1) ուղղակի ուսումնասիրության իրականացման եղանակով,

2) ներքին աուդիտի ինքնագնահատման արդյունքների վավերացման եղանակով:

ԳԼՈՒԽ 47. Արտաքին գնահատողներին ներկայացվող պահանջներ

158. Արտաքին գնահատողները, այդ թվում նրանք, ովքեր վավերացնում են ինքնագնահատումը, պետք է անկախ լինեն կազմակերպությունից և կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանումից: Գնահատող խումբը պետք է կազմված լինի այնպիսի անդամներից, որոնք տիրապետում են ներքին աուդիտի գործելակերպին և արտաքին գնահատման գործընթացին:

159.Արտաքին գնահատում իրականացնող խմբի անդամները գնահատման աշխատանքների ընթացքում, չպետք է ունենան որևէ պարտավորություն կամ շահ այն կազմակերպության հանդեպ, որի ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքը ենթակա է արտաքին գնահատման:

160.Արտաքին գնահատման կատարման և արդյունքների ներկայացման համար պահանջվում են մասնագիտական դատողություններ: Համապատասխանաբար, որպես արտաքին գնահատող (խմբի ղեկավար) հանդես եկող անձը պետք է.

1) լինի աուդիտի բնագավառի որակավորված մասնագետ, որը խորապես ծանոթ է ստանդարտներին,

2) փորձառություն ունենա մասնագիտության լավագույն գործելակերպում,

3) ունենա առնվազն երեք տարվա փորձ ներքին աուդիտի կամ նմանատիպ խորհրդատվական բնագավառում՝ որպես ղեկավար:

161.Արտաքին գնահատման խմբի ղեկավարը և խմբի աշխատանքը հաստատող անկախ մասնագետները պետք է օժտված լինեն ավելի բարձր մակարդակի ունակություններով և ավելի մեծ փորձով, որը ձեռք է բերվել նախկինում որակի արտաքին գնահատման խմբի անդամ աշխատելու ժամանակ, համապատասխան մասնագիտացված մարմինների կողմից կազմակերպվող որակի գնահատման վերաբերյալ (կամ այլ համանման) դասընթացները հաջողությամբ ավարտելու արդյունքում, կամ էլ որպես ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար կամ այլ համադրելի ղեկավար պաշտոնում աշխատելու ընթացքում:

162.Գնահատման խմբում պետք է ընդգրկվեն փորձառություն ունեցող տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետներ: Այլ ոլորտներում մասնագիտացված անձիք կարող են աջակցել արտաքին գնահատման խմբին: Օրինակ՝ ռիսկերի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտի, վիճակագրական ընտրանքների, գործառնությունների մոնիթորինգի համակարգերի կամ հսկողության ինքնագնահատման գծով մասնագետները կարող են մասնակցել գնահատման որոշակի ոլորտներում: